№ 223 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10 — 1905 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10 № 223

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինքնավարութիւն. Վերջին տեղեկութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Կոչ հայ հասարակութեան. Բազուի սև օրերից. Դրութիւնը Երևանում. Դրութիւնը Շուշում. Բանւորական շարժումները Խարկովում. Մի բէջոլիւցիա. Քաղուածներ եւրոպական մամուլից. Նամակներ Բաստովից, Ասարխանից. Ներքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

## ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Ներկայ գարնան, երբ հայ ազգաբնակութեան ներկայացուցիչները, ժողովված Թիֆլիսում, խորհրդակցում էին այն կարիքների մասին, որ պէտք է մտցնեն հայկական հանրագրի մէջ, մի կարևոր հարց, այն է համանդրկովկասեան ինքնավարութեան հարցի վերաբերութեամբ մշակեցին հետևեալ յօդուածը։

«Մտցնել մի համանդրկովկասեան դէմոսվային ժողով, որը իրաւունք պիտի ունենայ օրէնքներ առաջարկելու և նախօրօք քննելու Անդրկովկասին վերաբերեալ բոլոր օրէնսդրութիւնները»։

Զեակերպելով այդ բառերով հայ ազգաբնակութեան ցանկութիւնը, մտցնելով «դեմոսվային» բառը, հայ պատգամաւորութիւնը աշխատել է խուսափել հեռահեալ թիւրիմացութիւնից։ Եթէ նա գործածէր ուղիղ ինքնավարութիւն կամ ավտոնոմիա բառերը, չարամիտ մարդիկ կարող էին պղտորել շատերի մտքերը և հաւատացնել թէ հայերի նպատակն է անջատման առաջարկ անել, քաղաքական անկախութեան գաղափարը առաջ տանել, մի խօսքով սեպարատիզմի հարց դնել հրապարակի վրա։

Նոյն թիւրիմացութիւնը կարող էր առաջ գալ, եթէ գործածված լինէր ֆեդերացիա կամ դաշնակցութիւն բառը։ Կը գտնվէին անձեր, որոնք կը ցանկային ֆեդերացիա բառը մեկնել դարձեալ քաղաքական անկախ կազմութեան նշանակութեամբ, ենթադրելով, որ հայերը ներկայումս ցանկանում են ճանաչվել իբրև քաղաքական ուրոյն մարմին դաշնակցական կապով միացած Ռուսաստանի հետ։

Այդպիսի թիւրիմացութիւնները անախորժ հետևանքներ են ունեցել և իսկապէս մոլորեցրել են ոչ միայն վարչական շրջանները, այլ և շատ անգամ ինտելիգենցիային պատկանող անձերին։

Սակայն պէտք է առանց ուշադրութեան չը թողնել և այն, որ զգուշութեան համար գործածած «դէմոսվային» բառն էլ մի որոշ չափով մթնացրել է այն հասկացողութիւնը, որ հայ ազգաբնակութիւնը ունի համանդրկովկասեան ինքնավարութեան մասին։ Եւ ահա ինչու։

Զեմստվօ կոչված տեղական ինքնավարութիւնը ներկայումս բաւական նեղ սահմաններ է ծրագրել ինքնավարական գործի համար և խոչընդոտներ է դրել ազատ գործունէութեան առաջ ամեն մի քայլում։ Եւ անկասկած, ոչ ոք այնքան կոյր լինել չէր կարող, որ իրերի վրա նայէր այն տեսակէտով, որ ունեցել են դեմոսվային վերջին կանոնադրութիւնների հեղինակները։ Պետութեան զանազան մասերում լսվում են զոռ բողոքի ձայներ դեմոսվօի ներկայ կազմակերպութեան դէմ և պահանջում են, որ տեղական ինքնավարութեան իրաւասութիւնը ընդարձակվի և նրա գործունէութեան ծաւալը լայնանայ։

Եւ ի հարկէ այդ իրաւասութիւնը ու ծաւալը կարող են այնքան ընդարձակվել, որ արդարև դեմոսվօն կը դառնայ մի իսկապէս լայն տեղական ինքնավարութիւն, որ իր մէջ կամփոփէ տեղական ինքնագործութեան մեծ ասպարէզներ, բայց մենք դեռ չունենք այդպիսի օրէնսդրութիւն և դա ապագայի գործ է։ Եղած ծրագիրներից փոքր ի շատէ բաւարար է Սիբիրի գործողներէ կազմած ծրագիրը, որը հաւանութիւն գտաւ այն խորհրդակցութիւնների մէջ, որոնք տեղի ունեցան Նորերս Անդրկովկասում։

Ինչ անուն էլ տալու լինենք համանդրկովկասեան ինքնավարութեանը, անուանենք նրան արդեօք դեմոսվային համերկրային ինքնավարութիւն, թէ ավտոնոմիա ֆեդերատիվ հիմունքներով, կարևոր է, որ մենք բացատրենք թէ ինչ պարունակութիւն, ինչ բովանդակութիւն ենք մենք դնում այդ անունների մէջ։

Իսկ մինչև այժմ մանրամասն կերպով այդ խնդիրը չէ մշակված մեզանում։

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նոր-Բայազէտի գաւառապետը, նոյեմբերի 8-ից հեռագրով զեկուցանում է Թիֆլիս, որ անկարգութիւնները Շարուր-Դարալագեազի գաւառում երկիւղ են առաջացնում այդ գաւառին սահմանակից բոլոր տեղերում, թէպէտ կարգը հաստատելու համար ձեռք են առնված նախապատրաստական միջոցներ։ Ուղարկեցի տեղի վրա իմ օգնականին, տեղական պրիստաւին և պահակախումբ։ Այնուամենայնիւ մահմեդական քիւրդ գիւղերը վճռեցին գաղթել Երևանի գաւառը, բայց նախապէս ցանկացան տեսնել ինձ։ Գնացի ես նրանց մօտ, հանդարտացրի ժողովուրդը, վերականգնեցի կարգը։ Այդ ժամանակամիջոցում հայկական գիւղերում կորան քուրդ հովիւները։ Հիմք կայ կարծելու, որ նրանք սպանված են։

Քութայիսի փոխ-նահանգապետը հեռաձայն է հեռագրում ներկայ նոյեմբերի 8-ից. «Այսօր երկաթուղու գծի վրա, Զիատուրի կայարանից յիսուն քայլ հեռաւորութեամբ բէջոլների հարուածներից սպանվեց Բէսարաբեան գնդի վեցերորդ վաշտի հրամանատար կապիտան Տարասով։ Մարդասպանը փրաւորված է և բռնվեց։ Ես ուղարկեցի գաւառապետին կարգը պահպանելու և սպանութեան պատճառները պարզելու համար։

Եկատերինոդարից Կովկասեան բաժնի առաջնորդը զեկուցանում է Թիֆլիս նոյեմբերի 7-ից, որ Բամանովսկի խուտորում անկարգութիւններ սկսվեցին. խումբը սպանել է երկու ձիազորի, իսկ Կավկազսկայա կայարանում սպանված է ոստիկանական ուրեագնիկ։ Վախենում են անկարգութիւնների տարածվելուց։ Ուղարկված է Անապեան բատալիոնի մի վաշտ։ Գնաց այնտեղ գեներալ Բաբիչ։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԱՄՈՒԼ

Ռուսական հակայեղափոխութեան սև օրերը կարծես մոռացվել, յետ են քաշվել Լեհաստանի հարցի առջև, որ ներկայումս օրվայ հրատապ հարցն է դարձել։ Ռուսաց մամուլը ամենամեծ եռանդով քննում է այդ հարցը։ Վիտէի կառավարութեան ձեռք առած պատերազմական միջոցները սաստիկ դատապարտվում են ամեն տեղ, թէ մամուլի և թէ հասարակական կազմակերպութիւնների մէջ։ Ամենքը հաստատում են թէ Լեհաստանը չէ ուզում անջատվել Ռուսաստանից, այլ միայն վարչական և օրէնսդրական ինքնավարութիւն է պահանջում, իսկ դա նրա իրաւունքն է։ Մի բան միայն վիճելի է—կարող է Վիտէի կառավարութիւնը վճռել լեհական հարցը, քանի որ Ռուսաստանը ունի խոստացված սահմանադրութիւն, բայց դեռ չունի պարլամենտ, միակ հեղինակաւոր հիմնարկութիւնը, որ պիտի վճռէ այդպիսի ընդհանուր պետական հարցեր։ Իսկապէս վիճել էլ չէ կարելի թէ ներկայ կառավարութիւնը իրաւունք չունի մինչև պարլամենտ կազմելը լեհական հարցը այս կամ այն կերպ լուծել։ Ընդունելով այս դրութիւնը, ռուսաց մամուլը, այնուամենայնիւ, պահանջում է, որ կառավարութիւնը խիստ միջոցներ ձեռք չառնէ Լեհաստանի դէմ։ Խստութիւններ գործ դնել նշանակում է հարուածել Ռուսաստանի ազատական շարժումը։ Այս է ռուսաց մամուլի միահամուռ ազաղակը։

Մեզ համար ներկայ բոլորէին շատ հետաքրքրական է այն վերաբերմունքը, որ ունի դէպի Լեհական ինքնավարութիւնը ռուսաց սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը։ Ոչ միայն Ռուսաստանում, այլ և ամբողջ աշխարհում դա ամենաուժեղ, ամենակենսունակ քաղաքական կազմակերպութիւնն է, որին պատկանում է ապագան։ Ի՞նչպէս է նա վերաբերվում Լեհաստանի աւտոնոմիական ձգտումներին։ Յայտնի է, որ սոցիալ-դեմոկրատիան կենտրոնացման վարդապետութիւն է. մանր-մունր ինքնավարութիւններ, տեղական շահեր նա չէ ընդունում, ֆեդերատիվ, դաշնակցական կազմակերպութեան հակառակ է։ Եւ ահա նրա առջև մի դիլեմա—լեհական հարցը։ Այդ դիլեման այսպէս է վճռում ռուս սոցիալ-դեմոկրատիայի օրգան «Новая Жизнь» լրագիրը, որ այս քանի օրերը սկսեց հրատարակվել Պետերբուրգում.

Սոցիալ-դեմոկրատիան, որ ղեկավարում է պրոլետարիատի կռիւը—ասում է լրագիրը—իր սկզբունքներով կենտրոնացման կողմնակից է և ֆեդերալիզմի հակառակ։ Կազմել ոչ-բազմաթիւ խոշոր պետութիւններ բազմաթիւ փոքրիկ պետութիւնների փոխարէն, որոնք անջատված են իրարից քաղաքական և մաքսային արգելքներով—դա նպաստում է կապիտալի այն միսսիային, որ միացնում և համայնականացնում է արդիւնաբերութիւնը և որ պատրաստում է սոցիալիզմի յաղթանակը. դա նպաստում է նոյնպէս կազմակերպված պրոլետարիատի հզօր և լայնարձակ բանակներ կազմելուն, փոխանակ այն մանր առանձին զօրաբաժինների, որոնք կարող են միայն պարտիզանական կռիւ մղել կապիտալի և բանակալութեան դէմ։ Ուստի յեսադիմական քաղաքականութիւն կը լինէր ձգտել վերանորոգելու հին բաժան-բաժան և մասամբ նաև չնչված ազգայնական սահմանները։

Բայց սոցիալ-դեմոկրատիան մի և նոյն ժամանակ բոլոր իր ոյժերով բողոքում է ամեն տեսակ ազգայնական ճնշումների դէմ, այն բոլոր արգելքների դէմ, որոնցով կենտրօնացած պետութեան լուծը աշխատում է ոչնչացնել ազգայնական ինքնաորոշման ձգտումները։ Ուստի և իր ծրագրի մէջ ռուսաց սոցիալ-դեմոկրատական բանւորական կուսակցութիւնը մտցրել է պահանջներ. «բոլոր այն ազգութիւնները, որոնցից կազմված է պետութիւնը, ինքնաորոշման իրաւունք ունեն (յօդ. 9-դ), (նահանգական ինքնավարութիւն այն տեղերի համար, որոնք աչքի են ընկնում առանձին կենսական պայմաններով և ազգաբնակութեան կազմով (յօդ. 3-դ), «ազգաբնակութիւնը իրաւունք ունի կրթութիւն ստանալ մայրենի լեզուով, իրաւաքանչիւր քաղաքացի իրաւունք ունի ժողովներում խօսել իր մայրենի լեզուով. մայրենի լեզուն պետական լեզուի հետ համահաւասար իրաւունքներով պիտի մտցնվի բոլոր տեղական, հասարակական և պետական հիմնարկութիւնների մէջ»։ (յօդուած 8-րդ)։

Ահա, յենվելով ծրագրային այս որոշումների վրա, ռուսաց սոցիալ-դեմոկրատիան էլ ընդունում է Լեհաստանի ինքնավարութիւնը։ Մենք կարծում ենք, որ այս վերաբերմունքը ըսկզբունքի տեսակէտից անդրին նշանակութիւն ունի։ Հայերի մէջ վերջին տարիներս քիչ չը կային սոցիալ-դեմոկրատներ, որոնք անասելի մեղք էին համարում իրանց ազգային կենսական խնդիրներով, ազգային ինքնաորոշման գործով զբաղվելը։ Մինչդեռ ահա ամեն ինչ պարզ ապացուցանում է, որ հայ մեծը, իբրև հայ գործելը ամենևին հակառակ չէ գիտական սոցիալիզմին...

* * *

Մենք ստացանք «Ռազմիկ» անունով հայերէն նոր թերթը, որ հրատարակվում է Բոլգարիայում։ Նոր թերթը, դատելով առաջին համարներից, շատ լաւ տպաւորութիւն է թողնում։ Նրան ղեկավարողն է Կ. Պոլսի եբիտասարդ գրող Ռ. Զարդարեան, որ բաւական յայտնի անուն է ստեղծել։ Մենք կաշխատենք մեր ընթերցողներին մօտիկ ծանօթացնել «Ռազմիկի» հետ։ Առ այժմ ողջունում ենք մեր նոր եղբայրակցին և կատարեալ աջողութիւն ենք ցանկանում նրան։ Մենք մաղթում ենք, որ «Ռազմիկը» իբրև ազատ երկրում հրատարակվող մի լրագիր, կարողանար աւելի ընդարձակ չափերով ներկայացնել Թիւրքահայի սարսափելի դրութիւնը, մի և նոյն ժամանակ դառնար մի օղակ արևմտեան և արևելեան հայութիւնը իրար մօտեցնելու համար։ Այս պահանջը մենք անում ենք առհասարակ արտասահմանեան ամբողջ հայ մամուլից։ Ներկայումս, երբ իրականանում է Ռուսաստանում ազատ խօսքը, աւելի մեծ պահանջ է դառնում, որ հայութեան անջատված մասերը գոնէ մամուլի, գրականութեան միջոցով մօտենան իրար, աւելի սերտ համերաշխութեամբ խմբվեն համազգային շահերի շուրջը։ Մենք պատրաստ ենք մեր լրագրի մէջ ընդարձակ բաժին բաց անելու արտասահմանեան հայ մամուլի համար, եթէ միայն Եւրոպայի, Աֆրիկայի և Ամերիկայի զանազան կողմերում հաստատված հայ խմբագրութիւնները կը բարեհաճեն փոխանակել իրանց թերթը մերի հետ։ Դառնալով նորածին «Ռազմիկին», մենք արձանագրում ենք, որ նա խմբագրվում է հմտութեամբ, գրական կիրթ ճաշակով։ Մեզ վրա խոր տպաւորութիւն թողեց № 2-ի մէջ տպված «Շուն մըն ալ պակաս» պատկերը։ Դա Թիւրքահայ գաւառացի մօր մարտիրոսագրութիւնն է։ Այդ մօր աղջկան առևանգում է Թիւրքը, խելակորոյս մայրը վազում է առաջնորդարան, ճար է խնդրում, բայց առաջնորդարանի տէր վարդապետը մտադիր է թեմի առաջնորդ դառնալ, ուստի աշխատում է լաւ յարաբերութիւններ պահպանել Թիւրք պաշտօնեաների հետ։ Եւ անբախտ մայրը դուրս է վռնդվում առաջնորդարանից։ Վարդապետի համար առևանգված աղջիկը «Շուն մըն ալ պակաս» է։ Հայրենի սև իրականութեան ինչ ցնցող փաստեր այդ մայրն ու այդ վարդապետը....

## ԿՈՉ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Հայ ժողովուրդ, մեր պատմական անցեալում մշնքան յաճախ տեղի ունեցող հալածանքն ու թշուառութիւններն այս անգամ էլ ուժեղ թափով ցնցեցին զարգացման խաղաղ շաւղով ընթացող սերնդիդ դառնացած սիրտն ու զգացմունքը։ Ասիայի վայրենի և արիւնռուշտ շատ ազգեր քանի՞ցս քարուքանդ արին հայրենիքդ, արեան հեղեղներով ծածկեցին բնակավայրդ, սրի անցկացրին սիրելիներիդ և աղքատութեան դուռը հացրին քեզ. սակայն դու չը յուսահատվեցիր, միշտ ոտքի ելար, ինքնօգնութեան գաղափարով առաջնորդվեցիր և քրիստոնէութեան ու քաղաքակրթութեան դրօշը ծածանելով՝ գոյութիւնդ շարունակեցիր։ Այժմ էլ քո դարաւոր դրացիները կրկին դուռ ճանեցին քեզ. հայի արիւնով ներկվեցան ամբողջ գաւառներ, պատմական Ղարաբաղը, Երևանի, Հին-Նախիջևանի շրջակայ գիւղերը, Շարուր-Դարալագեազը նորից սրածութեան, աւարառութեան և կոտորածի ասպարէզ դարձան։ Կովկասի արդիւնաբերութեան կենտրոն Բագու, հայ քաջերի մելիքների ձեռակերտ Շուշի և հայութեան ամենահին պատսպարան Նախիջևան քաղաքների շէն ու փարթամ հայկական թաղերը քարուքանդ և հրդեհի ճարակ եղան. սոսկալի բարբարոսութիւնը մի քանի օրում ոչնչացրեց երկար ու ձիգ տարիների ընթացքում դառնի

քրտինքով ձեռք բերված ինչքն ու հարստութիւնը։ Հարիւրաւոր քաջ երիտասարդներ զոհվեցան ինքնապաշտպանութեան կուռում, ծերունիներ, կանայք ու մանուկներ խողխողվեցան անդութ ձեռքերով։ Բազմաթիւ շէն ու լի օջախներ աղքատացան, օրվայ հացի կարօտ մնացին, աշխատող ձեռքերից զրկվեցին, քաղաքացին մնաց անտուն, անգործ, անտիրական. գիւղացին կորցրեց տաւարն ու ոչխարը, իրան ապրուստ հայթայթող հողը մնաց անմշակ։

Վրա է հասնում ցրտաշունչ ձմեռը, սրից ու կրակից ազատված թշուառներին այժմ մահ է սպառնում ցուրտն ու սովը. արդեօք ո՞վ պէտք է ծածկէ նրանց մերկութիւնը, ո՞վ պէտք է տաք օթեան և կերակուր տայ, ո՞վ պէտք է հոգայ նրանց դառնացած սրտերը՝ ընկճված հոգիները սփոփելու և մխիթարելու համար։

Միայն դու, հայ ժողովուրդ, բացի քեզանից ուրիշ պաշտպան չունի հայութիւնը. դու էիր, որ մօտիկ անցեալում ոտքի կանգնեցրիր Տաճկահայաստանի սովեալներին, Զէյթունի հրկիզիալներին։ Այժմ էլ դու ես թշուառների յոյսն ու ապաւէնը, դու պէտք է սրբես նրանց աղիողորմ արցունքները, դու պէտք է մեղմացնես հարազատներիդ վշտացած սրտի կսկիծը։ Հայ ժողովուրդ, իբրև կենտրոնական քաղաքի պաշտօնեայ ինձ են դիմում թշուառները, զրկվածներն ու հարստահարվածները, որոնք գրաւոր և որոնք բանաւոր. յիրաւի նրանց ցաւը մեծ է, դառն՝ և կարօտ համայնական օգնութեան. թոյլ տուր ինձ հայ ժողովուրդ, ալեկոծ ծովի մէջ խեղդվող սիրելիներիդ—եղբայրներիդ ու քոյրերիդ վշտերին ու ցաւերին թարգման լինել, որոնք քեզ են դիմում իրանց ծննդավայրի աւերակների անկիւններում կծկված, ցնցոտիների մէջ փաթաթված և հազիւ ցամաք հացով կերակրվող հարազատ սիրելիներդ, կողոպուտի և աւարառութեան ենթարկված եղբայրներդ ու քոյրերդ։ Երիքովի ճանապարհին ընկած այսօրվայ ծանր վիրաւորը քո արիւնակիցն է, քո հարազատը, բարի սամարացու դերը դու պէտք է կատարես, քո բարոյական պարքն է այդ։

Հայ ժողովուրդ, քո օգնութեամբ պէտք է արիանան յուսահատվածները, վերանորոգվեն աւերակները. մի թողնիր որ հարազատներդ թշուառութիւնից ստիպված, լքված ու վիրաւոր հեռանան իրանց պաշտած հող ու ջրից, սիրելիների գերեզմաններից, նախնեաց սրբավայրերից։ Մի թողնի, որ դիմեն ազգակործան գաղթականութեան և օտար երկնքի տակ փչեն իրանց վերջին շունչը։ Եթէ սառնասրտութեամբ թոյլ տաս, որ թշուառների մի մասը սովամահ լինի և մնացեալ մասը պանդխտութեան մէջ որոնէ իր փրկութիւնը, իմացիր, որ այս վերջիններն էլ անդարձ կը կորչեն, յիշիր Լեհաստանը, և այսպէս Կովկասի հայութեան հիմքը կը խախտվի։ Այս նեղ և տագնապալի օրերում եթէ լայն չափով ինքնօգնութեան ու ինքնապաշտպանութեան չը դիմես, իմացիր, որ նոյն իսկ քո գոյութեանն է մեծ վտանգ սպառնում։

Հայ ժողովուրդ. նուէրներդ ուղարկիր ամենայն Հայոց Հայրապետի հովանաւորութեան ներքոյ գտնվող Թիֆլիսի յանձնաժողովի գանձապահ պ. Ալէքսանդր Մէլիք-Ազարեանցին և վստահ եղիր, որ շատ թշուառների դառն արցունքներ պէտք է սրբես. օգնիր խնդրում եմ, վայրկեանը թանդ է. և հաւատացիր, որ կը-վարձատրվես երկնաւոր Հօրից, իսկ ես կաղօթեմ որ դու չենթարկվես նման փորձանքների։

Առաջնորդ թեմիս հայոց
Վրաստանի և Իմերէթի
Գարեգին արքեպիսկոպոս

## ԲԱԳՈՒԻ ՍԵՒ ՕՐԵՐԻՑ

### II

Թէ ինչ քաջագործութիւններ կատարեցին այդ հարբած «ազգասէրները» քաղաքում 21-ին, երբ զօրքի և կօզակների հետ միացած այրեցին և թալանեցին մի շարք հայերի տներ և խանութներ, և սպանեցին ու վիրաւորեցին պատահած տասնեակ հայերի—դրա մասին «Մշակ»-ում արդէն գրվել է։

Ես կարճառօտ կերպով կը նկարագրեմ Բայիլօվում կատարածները։

Ճաշից յետոյ ժամը 4-ից այդ խուլիգանների համեմատաբար փոքր խմբեր սկսեցին քաղաքից վերադառնալ Բայիլով. նրանք վերադառնում էին այնպէս, ինչպէս յաղթանակ տարած զօրք. շատերը բերում էին թալանած իրեղէններ, իսկ մեծամասնութիւնը հազիւ կարողանում էր ոտների վրա կանգնել—որից կարելի էր եզրակացնել, որ քաղաքում խրմիչքեղէնի խանութներ շատ են թալանված։

Վայրենի դոռոցներ, անյիշելի հայհոյանքներ—բնորոշ արտայայտութիւններն էին այդ խուլիգանների հոգեկան տրամադրութեան։ Նրանց անասնական բնազդը դեռ ծարաւ էր արեան։ Եւ սկսեցին նրանք որսալ հայեր։

Ահա երևաց մէկը. մի խեղճ բանւոր, մի անմեղ մարդ, որ միամիտ գնում է քաղաք և չէ ենթադրում հարբած ռուսների կողմից առանձին թշնամութիւն դէպի իր անձնաւորութիւնը։

—Бей его армяшку, բղաւում են գազանները և մի ակնթարթում հարիւրաւոր քար թափվում է խեղճ հայի վրա. նա ընկած է, նա արդէն մեռած է, բայց խուլիգանները պէտք է փշրեն նրա գանգը, որպէս զի նա այլ ևս երբէք ազատութեան չը ձգտի։

Ահա մի դեռահաս հայ կին, դրանը կանգնած երեխան գիրկը։

Цѣлуй ее, ребята. повали ее... такъ, такъ... և թշուառ մայրը իր երեխայի հետ տորմված են այդ հրէշների ոտքերի տակ այնպէս, որ դժուար կարելի է տափակած դիակները միմեանցից ջոկել և բաժանել...

Հրճվում է ռուս խուլիգանը և շարունակում որսալ նոր զոհեր։ Բայց հայեր Բայիլօվում էլ չեն երևում. նրանք պահվել են տներում։

Խուլիգանները իջնում են Բիբի-Հէյբաթ. այնտեղ հայերը անտեղեակ են. հենց սկզբում բռնում են վեց հայ բանւորների և քարերով ու կրունկներով սպանում։

Արդէն մութը ընկել է և նրանց մեծ մասը պահանջ է զգում հանգստութիւն տալ իրանց հարբած ուղեղներին և վաստակաւոր ձեռներին. իսկ միւս մասը դեռ շրջում է փողոցներով և սպառնալիքներ անում վաղվայ համար։

Մի ծանօթ ռուս գալիս է ինձ մօտ և յայտնում, որ խուլիգանները որոշել են գիշերս այրել մեր տունը, որ դրութիւնը շատ լուրջ է, որ վտանգ է սպառնում բոլոր Բայիլովում ապրող հայերին, որ պէտք է անմիջապէս տեղափոխվել աւելի ապահով տեղ։ Ես ուշադրութիւն չեմ դարձնում. չեմ ենթադրում, որ խուլիգանները տները ներս խուժեն, այնուամենայնիւ պատրաստում եմ «մաուզէրս» և հեռախօսով իմաց տալիս ում հնարաւոր է սպառնացող վտանգի մասին։ Ամեն կողմից սկսում են զգուշացնել ինձ, որ հեռանամ ընակարանիցս. հեռախօսը անդադար գործում է։ Մի ժամից յետոյ ներս է մտնում երկրորդ անգամ ծանօթ ռուսը իր կնոջ հետ սփրթնած և շնչասպառ. տալիս է ինձ իր վերարկուն և գլխարկը և ես թեակալած նրա կնոջ հետ գնում եմ Բայիլովում յայտնի ծերունի զինուորական բժիշկ Մարիշևի ընտկարանը. նա լաւ բարեկամս է և ընդունում է սիրով։ Ես բոլորովին ապահով եմ և դարձեալ սկսում եմ հեռախօսով տեղեկութիւններ հաւաքել ծանօթներիս մասին և զգուշացնել որտեղ հնարաւոր է, բայց շատ տեղերից այլ ևս հայերի հեռախօսը չէ պատասխանում։ Լաւ նշան է այդ թէ ոչ—չը գիտեմ. հեռացել են նրանք էլ ինձ նման ապահով տեղ իրանց բնակարաններից, թէ... սիրաս ճմլվում է. անյայտութիւնը տանջում է ինձ և ես անզօր եմ որ և է բան ձեռնարկելու։ Ծերունի բժիշկը մխիթարում է ինձ և հանգստացնում, բայց խուլիգանների զոռոցը նրան էլ է մտատանջութեան մէջ դցում։

Ժամը գիշերվայ 11-ն է. լսվում է հեռախօսի ուժգին զանգը. բժիշկը երկար խօսում է և յետոյ բացատրում է ինձ, որ մի ծովային ծանօթ սպայ համոզում է նրան տեղափոխվել իր մօտ, որովհետև յամառ կերպով խօսվում է թէ այս գիշեր պէտք է այրեն այն տունը, որտեղ բնակվում է բժիշկը. բժիշկը ծիծաղում է այդ անհեթեթ ենթադրութեան վրա. չէ որ տունը պատկանում է ռուս Նազարովին, այնտեղ բնակվում են շատ ռուսներ և անգլիացիք։ Ճիշդ է, այդ մեծ տան մէջ, որ բռնում է համարեա մի ամբողջ թաղ, բնակվում են օդեսսայի դէպքերից յետոյ մեծ թւով հայեր Բիբի-Հէյբաթի աւերումներից փախած, բայց բժիշկը համոզված է, որ խուլիգանները չեն համարձակվի այդ տանը մօտենալ և, հակառակ դէպքում, իշխանութիւնը առանձին հոգատարութիւն ցոյց կը տայ բնակվող ռուսների և անգլիացիների շնորհիւ։ Թէպէտ ես այլ կերպ էի մտածում, բայց յարմար չէի գտնում վիճել բժշկի հետ, մանաւանդ որ բժշկի հեռանալը աւելի անապահով դրութեան մէջ կը դցէր այդ տան մէջ ապրող հայերի դրութիւնը։

Դրանից յետոյ էլի մի քանի անգամ կանչեցին հեռախօսով բժշկին և յորդորեցին թողնել բնակարանը, բայց նա հաստատ մնաց իր վճռին։

Ժամը կը լինէր մէկը, երբ ես և բժիշկը դուրս եկանք պատշգամբ. հարևան բնակարանի լուսամուտները բաց էին և այնտեղից լսվում էին դաշնամուրի և երգեցողութեան ձայներ. երգում էին աղճատված լեզուով „Боже царя храни“. դրանք անգլիացիք էին, «Օլէումի» կառավարիչները, որոնք պատրաստվում էին դիմաւորել խուլիգաններին այդ երգով։

Խեղճ անգլիացիք. նրանք չը գիտէին, որ մի քանի ժամից յետոյ այդ դաշնամուրը ջարդ ու փշուր պէտք է լինի նոյն խուլիգանների ձեռքով. նրանք չը գիտէին, որ իրանց կրթած խուլիգանը հարբած և խելքը կորցրած միջոցին չի ջոկի հարազատը օտարից։ Չէ՞ որ այդ խուլիգանները իրենց բոլոր պարագլուխներով ձեր ծառայողներն են, չէ՞ որ բանւոր-արհեստաւոր ընդունելիս դուք ընտրում էիք միայն այդ խուլիգաններից, որպէս զի գործադուլի ժամանակ ձեր գործը չը կանգնի. ձեզ ի՞նչ փոյթ թէ Ռուսաստանի 150 միլիոն ժողովուրդը տառապում է տգիտութեան և ճնշումների տակ. դուք պատրաստ էք աւելի ևս տգիտացնել այդ ժողովուրդը, որպէս զի մի քանի տասնեակ հազար ռուբլի աւել աշխատէք։ Օ՜, լուսաւորված անգլիացիք, դուք մեծ մեղք էք գործել Բագուում ազատարար շարժման դէմ և ի զուր չէ, որ այժմ հեռագրներում ձեր ֆիրմաներին անուանում են «խուլիգանական ֆիրմաներ»։ Եւ այժմս էլ դուք փողով երաշխաւորութիւն էք ներկայացնում և ազատում բանտարկած խուլիգանների պարագլուխներին։ Ի՞նչ անուն տանք ձեզ...

Առաւօտ ժամը հինգն է, ես վեր եմ թռչում տեղից սարսափելի աղաղակներից զարթնած. բժշկի ընտանիքը նոյնպէս ոտքի վրա է և պատրաստվում ենք փախչել, որովհետև խուժանը արդէն յարձակվել է Նազարովի տան վրա, քանդում է անկիւնի խանութը և սպառնում այրել տունը։ Ես շտապով խնդրում եմ բժշկին ամեն միջոց գործ դնել պահելու այդ ամբոխը, մինչև ես կը հասնեմ ադմիրալի մօտ և զինուորական օգնութիւն կը խնդրեմ նրանից. բժիշկը խոստանում է և կատարում է խոստումը։ Ես վազում եմ ադմիրալի մօտ. նա ինձ ընդունում է շատ բարկացած, երևի կարծելով թէ եկել եմ պատսպարվելու նրա մօտ։ Ես շտապով աղերսում եմ օգնութեան հասնել մօտ 300 հայերին, որոնք Նազարովի տանն են և որոնց սպառնում է մահ, եթէ զօրքը շուտափոյտ չը հասնի։ Նա սկզբում խօսում է խիստ, յետոյ մեղմացած խոստանում է կարգադրել անմիջապէս։ Ես խնդրում եմ նոյնպէս պատրաստել տալ շոգենաւ հայերին հեռացնելու Բայիլովից. նա ասում է, որ պատերազմական նաւ չէ կարող տալ, իսկ կաշխատէ մասնաւոր նաւ գտնել և ես դուրս եմ գալիս նրա մօտից։ Ես պէտք է մտածէի և իմ մասին, որովհետև խուլիգանները նկատել էին ինձ. վերադառնալ հայերի մօտ այլ ևս անհնարին էր, նրանք շրջապատված էին խուլիգաններով. ուրիշ տեղ չունէի։ Ամենամօտ տեղը ռուսաց եկեղեցին էր, ուր և պատսպարվեցի, որ միջոց ունենամ մտածելու իմ ապագայ անելիքիս մասին։ Եկեղեցում մնալ չէր կարելի, որովհետև խուլիգանները միշտ մեծ բազմութեամբ հաւաքվում են եկեղեցի և ես ոչ մի յոյս չունէի թէ եկեղեցում լինելս ինձ կազատէ այդ գազաններից։ Յետոյ ես միայն լսեցի, որ եկեղեցում ռուս քահանայի շնորհիւ ազատվել են երկու հայեր։ Ես դուրս եկայ եկեղեցուց և գնում էի այն տունը, որտեղ տեղափոխվել էր իմ ծանօթ բժշկի ընտանիքը, բայց ճանապարհին պատահեցի մի ուրիշ ծանօթ ռուսի, որը և պատրաստարեց ինձ երեք օր, մինչև հնարաւոր եղաւ գիշերով հասնել քաղաք։

Երբ բժիշկ Մարիշևը տեսնում է, որ հայերի դրութիւնը յուսահատական է, դիմում է խուլիգանների գլխաւորներին և խնդրում պահել խուժանը մինչև բնակվող ռուսները դուրս բերեն իրանց ունեցածը Նազարովի տնից. և միայն այդ միջոցով նրան աջողվում է ազատել հայերին, որովհետև մինչև այդ հասնում են զօրքերը և շրջապատում տունը։ Բայց մինչև զօրքի հասնելը խուլիգանները այդ տան մէջ կարողանում են սպանել երեք հայերի ամենասոսկալի կերպով։

Երբ զօրքերը շրջապատում են տունը, նրանց մի մասը դուրս է բերում հայերին և տեղափոխում իրանց կազարմանները, որտեղից նրատեցնում են «Նորմա» շոգենաւը և տանում Սև-քաղաք։

Խուլիգանները կատաղած են. նրանք անպատճառ ուզում են այրել Նազարովի տունը, որտեղ ապրելիս են եղել այդքան հայեր և թալանել վերջիններիս բնակարանները. բայց զօրքը շրջապատել է տունը։ Այդ ժամանակ լուր է տարածվում զօրքի մէջ, թէ հայերը Տելեֆօնների փողոցում կոտորել են 280 ռուս երեխաների։ Զօրքը այդ լսում է թէ չէ՝ անմիջապէս թողնում է իր բռնած դիրքը և թոյլ տալիս խուլիգաններին այրել ու թալանել տունը։ Իսկ շատերը զօրքերից գնում են կազարմաները վրէժ լուծելու հայերից, բայց հայերը արդէն շոգենաւի վրա էին։

Մի ուրիշ շոգենաւ էլ—«Մենասան» վերցրել էլ «Դէֆէստ» գործարանում պատսպարված 60 աւել հայերի, որոնք նոյնպէս չափազանց վատանգաւոր օրէներ են ունեցել։

Բայիլօում և Բիբի-Հէյբաթում սպանված և վիրաւորված հայերի թիւը հասնում է երեսուն և վեցի։ Հայերը իրանք ոչ մի գնդակ չեն արձակել, իսկ երևակայական ռումբերի մասին խօսք էլ չէ կարող լինել։

Բայիլօվից արտաքսվել են և հրէաները և վրացիները—բժիշկ Կրինսկի, մանկաբարձուհի Էմանուէլ, դեղավաճառ Նօվինսկի, «Օլէումի» ծառայող Զափարիձէ և այլն, որոնք հազիւ ազատվել են այդ նոր տեսակի մարդասպաններից։

Մ. Շ.

## ԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Նոյեմբերի 7-ին

Բագուի, Թիֆլիսի և Ռուսաստանի միւս քաղաքների խուլիգանների տուած ջարդերը և ֆլասները ժողովրդին միանգամայն մտատանջութեան մէջ են ձգել մեզ։ Դեռ նոյեմբերի սկզբներին քաղաքում լուր տարածվեց թէ խուլիգաններ են եկել, որոնք միանալու են Թուրքերի և զօրքերի հետ՝ հայկական ջարդ առաջացնելու։ Այդ լուրը քանի գնաց լայն ծաւալ ստացաւ մինչև նոյեմբերի 5-ը, այնպէս որ ամեն մի մարդուց լսում էինք թէ վաղը, նոյեմբերի 6-ին, խուլիգանները կառավարչական ցոյց են անելու և թէ հայերին ջարդելու են։

Այդ բանի համար Մրգաստանի Հ. Յ. Դաշնակցութիւնը դիմեց հեռագրով Թիֆլիսի կենտրոնական բիւրօին՝ դիմելու Փոխարքային, որպէս զի մի որ և է ցոյց չանեն։ Դիմեց քաղաքացիների յորդորմամբ և քաղաքագլուխը, որից յետոյ Փոխարքան հեռագրեց գեներալ-նահանգապետին թէ «ոչ մի հայրենասիրական ցոյց չանել»։ Վախը և երկիւղը շատացաւ նոյեմբերի 1-ին, երբ որ Թուրքերի բոլոր խանութները անխտիր փակ էին, սակայն Թուրքերը փակել էին, որովհետև իրանց Ալիի մահվան տարեդարձն էր։

Այսպիսով ամբոխային ախուր հոգեբանութիւնը առ այժմ վերջացաւ խաղաղ և երևանը նորից ընդունեց իր սովորական տեսքը։

Այդ օրը քաղաքի գլխաւոր փողոցում նուագում էին 8-րդ Կովկասեան գնդի զինուորները։ Ասաֆեան մեծ փողոցի մի ծայրից դէպի միւս ծայրը շրջեց Բակինսկի գնդից մէկ վաշտ իր սպայով։ Ըստ ոստիկանական տեղեկութեան, խուլիգաններից ձերբակալեցին չորս հոգի։

Չը նայելով, որ երկաթուղու հաղորդակցութիւնը վերսկսվել է, բայց շաքարը ծախվում է 28—30 կոպէկ ֆունտը։

Նոյեմբերի մէկին գիմնազիայի աշակերտների և կանանց դպրոցի աշակերտուհիների գործադուլը վերջացաւ։

Այսօր էլ վերջացաւ Պուշկինի դպրոցի աշակերտների գործադուլը։

3 դպրոցներում սկսվել են դասերը։ Ասում են, որ հոկտեմբերի 30-ին խառնակութիւն առնող սպային հեռացրել են։

Պ. Տէրունեանց

## ԴՐՈՒԹԻՒՆԸ ՇՈՒՇՈՒՄ

Նոյեմբերի 4-ին

Եթէ կայսերական մանիֆէստը ազատութիւն է տալիս քաղաքական յանցաւորներին, որոնք, իբրև Ռուսաստանի վերածնութեան համար

մարանչողներ, հին ըէժիմի ոգով դատապարտված էին աքսորավայրերում և բանտերի մէջ փտելու, անշուշտ նոյն ազատագրութեան ժառանգորդներ պէտք է համարվեն և կայսրութեան ամեն ծայրերում գտնվող այնպիսի տարրեր, որոնք իրանց պատուի, գոյքի և անձի ինքնապաշտպանութեան մարտիրոսներ են։

Մենք առաջին օրն ուրախացանք, երբ բանտից ազատվեցին բժ. Աթաբէգեան, ուսանող Մելքումեան, Ռ. Իւզբաշեան և ընկ.։ Սակայն ազատութեան հետ միասին, զուգընթացաբար, հրաման արձակվեց նրանց Գանձակի նահանգում չը մնալ և մինչև երկու օրը դուրս գնալ Շուշուց։ Սրանով չը դադարեցին խուզարկութիւններն ու ձերբակալութիւնները և բանտարկվեցին էլի չորս հայեր—Ա. Պետրոսեան, Ս. Նարիմեան, Մ. Սադրեան և Ժամհարոդլեան, որոնք յանցաւոր էին ճանաչվում իբրև Շուշու կոտորածի ժամանակ Թուրքերի դէմ պաշտպանութեան զէնք կրողներ, կամ ինքնապաշտպանութեան քարոզիչներ...

Չեմ մոռացել, որ երբ Շուշու հայ-թրքական կոտորածի երկրորդ օրը նահանգապետի պաշտօնակատար Բարանովսկի եկաւ Շուշի, իջաւ հայերի մէջ և տեսնելով հայերի տարած յաղթութիւնը՝ ասաց «քաջ կարիճներ, շնորհաւորում եմ ձեր յաղթութիւնը»։ Նոյն օրը հայերը խնդրեցին Բարանովսկուն, որ քանի դեռ ուշ չէ, միջոցներ ձեռք առնէ հաշտութեան և երկու հարևան ու բարեկամ ազգերի մէջ նախկին համերաշխութիւնը վերականգնէ։ Հաւատացնում են, որ նոյնը խնդրում էին և Թուրքերը։ Նա խոստացաւ։ Բայց հետևեալ առաւօտը Թուրքերի թաղը գնալով՝ այլ ևս չը վերադարձաւ, այլ ևս հայերը չը կարողացան նրա երեսը տեսնել։ Բանակցութիւնները կատարվում էին թղթի միջոցով, որը տանում բերում էր կօզակ ձիաւորը և Պիվօվարով գաւառապետի մի խուլիգան տղան... Եւ այնքան ձգձգվեց հաշտութեան խնդիրը, որ Թուրքերը դրսից ահագին թւով այժ և օգնութիւն ստացան, հայերին հալածեցին և հազարի չափ տներն ու խանութները թալանեցին, այրեցին։ Այս էր Բարանովսկու ձեռք առած հաշտութեան միջոցը...։ Բայց ի՞նչ հանելուկ էր կաշկանդել Բարանովսկուն, որ նա վերջին օրը իրան յայտնապէս անպօր ցոյց տուեց և ձեռնթափ լինելով որ և է միջամտութիւնից ու հայերին օգնելուց, ասաց՝ «սրանք երդվել են մինչև վերջը կռուել, ես ինձ ձեռնպահ եմ համարում, գործադրեցէք՝ ինչ միջոց որ իմանում էք, պաշտպանվեցէք՝ ինչպէս գիտէք»։ Եւ հայերը յուսահատված էին... իսկ զօրքը առաջնորդարանի պատերի տակ հարիւրներով թափված անգործ ու անհոգ՝ լուռ ականատեսներ էին հայի փախուստին և տների հրդեհին...։

Մեղաւոր էր արդեօք հայը, որ այդ տեսակ տագնապի մէջ ստիպված էր անտարբեր ու անզօր ադմինիստրացիայի աչքի առաջ վերջին ճիգը թափել և իր գոյութիւնը պաշտպանել։ Մեղաւոր էր նա, որ պաշտպանվեց, զէնք վերցրեց, կռուեց, խրախուսեց, քաջալերեց ժողովրդին... և այսօր պիտի բանտարկութեան մատնվի։ Ո՞վ էր նրան հրապարակ հանողը, իր հարևանի դէմ կռուեցնողը. միթէ ադմինիստրացիան չէր պատճառ, որ մենք ինքնապաշտպանութեան համար զէնք կրել սովորեցինք։

Մեզ հայերիս մեղադրում են իբրև խռովարարների, իբրև անկախութեան, սեպարատիզմի ձգտողների։ Հազար բերան մենք բացատրեցինք, որ այդ տեսակ ձգտում չունենք, այլ ցանկանում ենք կեանքի և գոյքի ապահովութիւն, իրաւունքի անձեռնմխելիութիւն։ Մենք մեր աչքով տեսնում էին, որ մեր հարևանները զինվում են, անթիւ անհամար ամեն տեսակի զէնքեր են ստանում։ Այդ իմանում էր և ադմինիստրացիան, իմանում էր և պօստը, որը իբրև զէնք փոխադրող մի կանտօրա էր։ Թուրքերն էլ մինիստրացիան, իմանում էր և պօստը, որը իբրև զէնք փոխադրող մի կանտօրա էր։ Թուրքերն էլ բան ու գործ չունէին, ամեն պօստով տասնեակներով զէնքի փաթեթներ էին ստանում։ Կանտօրան նրանց բաց էր թողնում գիշերը։ Զինօշիկները հարստացել էին... ամեն մի փաթեթի համար որոշ տուրք կար սահմանված։ Շահը, օգուտը մի կողմից և Թուրքի զրպարտութիւնը հայի դէմ, նրան սեպարատիզմի մէջ մեղադրելը միւս կողմից, տրամադրում էին բիւրօկրատիայի մարդկանց ազատ կերպով թոյլ տալ Թուրքերին՝ հայերին ճնշելու։ Եւ եռանդով առաջ էր գնում գործը... Հայը մնացել էր ապշած։ Ի՞նչ դաւ էր այդ, որ նիւթվում էր նրա դէմ և ի՞նչ սպանդանոց, որ պատրաստվում նրա համար։ Նա զգաց, որ պէտք է պաշտպանվել և զինվեց, բայց շատ աննշան կերպով, հարիւր անգամ պակաս Թուրքից...։ Այստեղ Թուրքն իրագործեց երկու նպատակ։ Մէկ որ առերեսս պատրաստակամութիւն յայտնեց կառավարութեան ճնշելու հայի սեպարատիստական ձգտումը, և երկրորդ, որ այդ պատրուակի տակ, վարագոյրի ետևում առաջ էր տանում նա իր վաղուց փայփայած տենչանքը—ճնշել, ուժասպառ անել հային, իբրև Կովկասում մահմեդականութիւն հաստատելու արգելք լինող մի տարրի։ Հասկացաւ արդեօք կառավարութիւնը, համոզվեց այդ բանի մէջ, մենք չը գիտենք։ Ո՞վ գիտէ, գուցէ դրա համար է, որ Տակայշվիլիներն ասում են՝ «նոր ենք իմանում, որ հայը մեղաւոր չէ...»

Այո՛, հայը մեղաւոր չէ...։

Հայը լուռ նստած է...։

Իսկ Թուրքը։—Անցեալ անգամ գրեցի, որ վերջին պօստով միայն 66 պասիլկա զէնք ու փամփուշտ էր բերել պօստը Թուրքերի համար։ Բռնեցին, արձանագրեցին, փաթեթները պահտուին։ Բայց, յանկարծ գիշերը ոստիկանութիւնից շէյթանական մի հրաշքով անհետացան այդ փաթեթները և ամեն մէկն իր տիրոջ տունը գնաց....

Շուշեցի վաճառական և Թուրքի բազարում քարվանսարա ունեցող Յակոբ Մասումեանը, երկուշաբթի առաւօտ, ամսոյս 1-ին, գնում է իր քարվանսարան՝ խանութպաններից վարձ ստանալու, և այլ ևս չէ վերադառնում։ Պատրուլ զինուորի աչքի առաջ, քարվանսարայի շէմքով մտնելուց իսկոյն Թուրքերը չանթում են նրան, քարշ տալիս ներս և բարբարոսաբար սպանում, նախ կտրելով ձեռքերը, յետոյ ոտքերը և այլն։

Խնձորստանում քոլանի կոչվող Թուրքերը յարձակվում են անտառը փայտի գնացած երկու հայի—հայը և որդու վրա և սպանում։

Զաբրայիլում Հիւսէին աղա Զիվանշիր, որ հայերի ձեռքով ազատվեց մահից վերջին կոտորածի ժամանակ, հրապարակօրէն հրամայում է իր որդիներին և ծառաներին և սպանել տալիս մաքսատան պաշտօնեայ Արիստակէսին։

Վեց-եօթը գիւղերում նշանակված էկզէկուցիաները քանդեցին հայ ժողովրդին։ Անվախ, կատաղի կօզակը մինչ այն աստիճան անգութ է, որ հրացանի պաշտպանութեամբ դաշտ գնացող և վար անող գիւղացու հրացանը խլում է, թէ մեզ հրամայած է զինաթափ անել, և յետոյ ամեն մէկից 10, 20, 30 ռուբլի բախշիշ ստանալով յետ տալիս հրացանը...։

Այս բոլորի դէմ հայերը լուռ էին, իսկ հայ ագիտատորները հայրենիքից հեռանալու դատապարտված։ Ուրեմն մենք Ռուսաստանի հպատակներ չէինք, այլ սպանդանոց տարվելու ոչխարներ։ Ադմինիստրացիան որոնում էր յանցաւոր հայերին Շուշուց քշելու համար։ Նրանք գնացել էին։ Մնացել էր բժ. Աթաբէգեան։ Գենեռալ Տակայշվիլին եկաւ։ Աթաբէգեան խօսք ունէր ասելու, պիտի ասէր նրան և յետոյ հեռանար Շուշուց։ Նա ներկայացաւ գենեռալին, բացատրեց ամեն հանգամանք իր իսկական գոյնով, որին գոհ օրտով լսեց գենեռալը, զղջում յայտնեց, որ իրան ուրիշ կերպ են հասկացրել և ազատ թողեց նրան և ընկերներին ապրել որտեղ ուզում են։ Ընդ նմին և խոստացաւ բանտից անմիջապէս արձակել նոր բռնված չորս հայերին և նախկին բանտարկվածներին ևս։

Հայ պատգամաւորներին նա յայտնեց, որ ինքը նոր է համոզվում հայերի անմեղութեան մէջ...։ Ոստիկանապետին, որ յայտնի Թրքամոլ մի կօզակ սպայ է և յաճախ ատելութեամբ է վերաբերվում դէպի հայերը, նա արձակեց պաշտօնից։ Իսկ Թուրքերին հրամայեց մինչև 12 ժամը տալ Մասումեանի դիակը և 3000 ռ. փրկանք նրա ութ մանր երեխաներից և երիտասարդ այրուց բաղկացած ընտանիքին։

Տուի՞ն Թուրքերը։—Ի հարկէ ոչ...։

Երէկ երեկոյեան իրարանցումն էր դպրոցական շինութեան առաջ։ Զինուորները թափվեցին մի խանութպանի վրա և սաստիկ ծեծեցին, իսկ մի ըէալիստի տրորեցին ոտի տակ։ Արդեօք սա խուլիգանական վայրագութեան մի կոչ չէ՞ ի ծառայութիւն բիւրօկրատիայի օրհասին...։

Տ.

## ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԽԱՐԿՕՎՈՒՄ

—

Հոկտեմբերի 12-ին

III

Հոկտեմբերի 10-ի և 11-ի դէպքերի մասին գրածս երկու ընդարձակ թղթակցութիւնները, չը կորչելու համար, ուզեցինք պատուիրած ծրարով ուղարկել, բայց հնար չեղաւ. փակ են ոչ միայն պօստի բաժանմունքները, այլ և կենտրօնական գրասենեակը, կտրված են հեռախօսի և հեռագրի թելերը, ընդհատված է պօստային հաղորդակցութիւնը, կանգնած են երկաթուղային բոլոր գնացքները, ուստի մեր պատուիրած ծրարը, երկու թղթակցութիւններով, ձգեցինք կենտրօնական գրասենեակի դրսի պատից կպած արկղի մէջ, ուր շրջում է զինուորական պահակը, սակայն չը գիտենք նա տեղ կը հասնի՞ թէ ոչ։

Ի՞նչ է կատարվում այսօր, այդ էլ հետաքրքիր է, թէև քաղաքի կենտրօնում ընդհարումներ չը կան. ի՞նչ է կատարվում մասերում, ծայրերում, մանաւանդ շոքեմէքենաների գործարանում—յայտնի չէ։ Լրագիրներ լոյս չեն տեսնում, ժողովուրդը չը գիտէ ի՞նչ է կատարվում շրջակայքում, միւս քաղաքներում, յարաբերութիւնը ընդհատված է դրսի աշխարհի հետ։ Քաղաքը կատարեալ մեռած դրութեան մէջ է, բոլոր խանութները փակ են, մթերքներ չեն ճարվում, հաց ձեռք չէ ընկնում, հիմնարկութիւններ մեծ մասամբ փակ են, բանկային հաստատութիւնները պաշտպանութեան տակ են դրված, փողոցներում շրջում են պահակներ և կօզակների ու դրագունների վաշտեր։ Ժողովուրդ փողոցներում թէև կայ, բայց նա գտնվում է երէկվայ արիւնահեղ ընդհարման տպաւորութեան տակ։

Նիկոլաևեան հրապարակը և համալսարանի փողոցը ու այդ երկու երկար տարածութիւնները իրանց մէջտեղ գտնվող մի քանի փողոցներով պաշարված են չորս կողմից, ոչ օրի թոյլ չէ տրվում մտնել այդ կենտրօնական շրջանի մէջ։ Ի՞նչու...

Համալսարանի մէջ ամրացած ցուցարարները, աւելի քան 500 հոգի, անձնատուր չեն լինում, քաղցն էլ նրանց չէ ընկճում. մի անգամ միայն, այս գիշեր, նրանց կարելի է եղել հաց հասցնել։ Երէկ առաւօտ լանից մինչև այսօր, ժամը 12—1-ը, նրանք յամառ կանգնած են. կանգուն են նաև նրանց թւով եօթն բարիկադները վառելափայտերից, գերաններից, երկաթէ ցանկապատերից շինած, մի երկու տեղ մինչև անգամ հեռախօսի վայր ձգած սիւներով ամրացրած ու թելերով հիւսած։ Այնպէս որ համալսարանի մուտքը երկու կողմերից բարիկադներով փակելուց զատ մի քանի բարիկադներով փակված են նաև մուտքերը դէպի համալսարանի հրապարակը, որը ներկայացնում է ջարդված իրերի և արխիվի շաղ անցած թղթերի մի քաոս։ Կանգուն մնում են նաև 10-ից աւելի կարմիր դրօշակներ համալսարանի և բարիկադների վրա։ Այս ապստամբների սահմանն է. պաշարող զօրքերի սահմանը շատ ընդարձակ է և մեծ, որոնք առանց մօտենալու ապստամբների սահմաններին՝ հեռուից շարունակում են պաշարումը։

Օրը գնում է, ժողովրդի դրութիւնը աւելի ևս ծանր է դառնում, զօրքերը յոգնում են, բայց ապստամբները չեն ուզում անձնատուր լինել։ Ուժի դիմելը դժուար է, համալսարանի մէջ ենթադրվում է զէնքի պաշար—Սպօրտի զէնքերից մանաւանդ նոյն իսկ ռումբեր—քարերին ու աղիւսներին հաշիւ չը կայ, որոնք դիզված են լուսամուտների մէջ։ Ամեն բոպէ սպասվում է բանւորների խուժումն քաղաքի ծայրերից դէպի կենտրօն։ Կառքերով հիւանդանոցներից դուրս են տանում կապկապած վիրաւորներին, այս էլ իր ազդեցութիւնն է ունենում ժողովրդի վրա։ Միակ միջոցը մնում է բանակցութիւնը երկու կողմերի մէջ, որի համար և ընտրվում է մի կօմիտէտ։ Համաձայնութիւնը կայանում է, վերջապէս խոստումն է տրվում ոչ մէկին էլ չը ձերբակալել և ահա ճիշտ ժամը 3½-ին, ճաշից յետոյ, համալսարանում ամրացած ուսանողներից, բանւորներից, աշակերտներից և օրիորդներից կազմված գունդը դուրս է գալիս օվացիաներով։ Առանց զօրքերի և հսկողութեան գնում էր այդ մեծ խումբը չորս կողմից շղթայ բռնած յաղթական աղաղակներով, իսկ նրա քամակից ահագին ժողովուրդ—համակրողների մի երկար շղթայ, որը շարունակվում էր մի քանի բօպէ. հետաքրքրվողների մի երկար շղթայ էլ գնում էր բոլորից առաջ։ Այս պրօցէսը, իր տեսակի հազուադէպ պրօցէսը, մենք տեսանք Մօսկովեան միմեանց շարունակութիւն կազմող փողոցները միացնող կամրջի վրա։ Պրօցեսը գնում էր դէպի Սկօբելևեան հրապարակը միտինգ կազմելու իր յետագայ անելիքների համար. այդ թոյլ էր տրված, նահանգապետի կողմից ազնիւ խոստում առնելով, որ ցոյցեր տեղի չեն ունենայ։ Որքան կարողացանք իմանալ, միտինգը որոշել է վաղը ժամը 10-ին հաւաքվել շոգեմէքենաների գործարանը, ուր գտնվում են գործադուլ եղած հազարաւոր բանւորներ, միասին որոշելու խնդիրը։

Այս բոլոր ժամանակ անգործ չէր նաև հակառակ մտածող կուսակցութիւնը իր խուլիգաններով, որը ոչ մի ջանք չէր խնայում պղտորել ամբոխի մտքերը սուտ-սուտ լուրեր սարածելով, որ իբր հրէաների բանն է այս բոլորը, որ իբր սօբօրը, որը գտնվում էր բարիկադների մէջ, սրբապղծված է ապստամբների ձեռքով և այլն։ Ի հարկէ շուտով հնար եղաւ այդ բոլորը հերքելու։

Համալսարանը դատարկվելուց յետոյ թոյլ տրվեց ժողովրդին Նիկոլաևեան հրապարակը դուրս գալու, ուր անգին հետաքրքրութիւն դարձրված է ժողովրդի կողմից Սպօրտի կողոպտված զինավաճառանոցի, գնդակներով ծակծկված դռների և պատերի վրա, նաև հրապարակի ու մայթերի վրա տեսնելու արեան հետքերը, սակայն նրանք չը կան, անհետացել են։

Հոկտեմբերի 10-ի սպանվածների և վիրաւորների թիւը պաշտօնական տեղեկութիւններով ասում են 35 է. իսկ երէկվանը դեռ յայտնի չէ, թէև ութն անգամ աւելի են հաշվում նախորդ օրվանից։

Սկսել են բարիկադները հաւաքել և փողոցները մաքրել։

Ա.—Դ.

## ՄԻ ԸՆԴՕԼԻՒՑԻԱ

—

Խնդրում ենք զետեղել ձեր յարգելի լրագրում հետևեալ ըէզօլիւցիան, որը մշակված է ուսանող-կովկասցիների ձեռքով Վարշավայի պօլիտեխնիկումում։

Մենք, կովկասցի-ուսանողների մի խումբ Վարշավայի պօլիտեխնիկումում, կազմելով եկեղբ ուսանողութեան փոքրիկ մի մասը հեռաւոր երկրից, որը այս բոպէիս ներկայացնում է եղբայրասպան կռիւ բեմ զանազան ազգութիւնների, յայտնում ենք մեր խորին համակրանքը մեր բախտակից եղբայրներին—լեհերին նրանց արդար պահանջի առիթով՝ տալ Լեհաստանին ներքին ինքնավարութիւն։ Մենք հաստատ համոզված ենք, որ միակ գրաւականը կուլտուրական և տնտեսական զարգացման ժողովուրդների, որոնք ապրում են ծայրագաւառներում, կայանում է ներքին աւտօնոմիայի մէջ լայն հիմունքներով։ Որպէս զի աւելի շուտով տեղի ունենայ կեանքում մեր լեհ ընկերների անհրաժեշտ պահանջը և չը կամենալով մինչև անգամ կողմնակի կերպով հանդիսանալ գործիք կառավարութեան ձեռքում ռուսացման գործում, մենք գտնում ենք, որ մեր միալը պօլիտեխնիկումում կարող է արգելք հանդիսանալ լեհ ազատագրական շարժման, ուստի մենք բոլորովին թողնում ենք ինստիտուտը, վերապահելով մեր իրաւունքը յետ չը վերցնելու մեր վկայաթղթերը ինստիտուտից մինչև մի տարի։ Սրանով միասին մենք դիմում ենք ակադեմիական դաշնակցութեան, որ նա աջակցէ մեզ փոխադրվելու ուրիշ բարձրագոյն դպրոցներ Ռուսաստանում։ Մեր ընկերներից նրանց, որոնք գտնվում են Կովկասում և որոնց գալը մենք սպասում էինք, որպէս զի նրանք մասնակցեն մեր համախորհուրդներին, տալիս ենք իրաւունք գրաւոր միանալու մեր ըէզօլիւցիային»։

Համաձայնվելով մեր ընկերների կարծիքի հետ, միացնում ենք մեր ստորագրութիւնները ըէզօլիւցիայի տակ։

Մ. Մելիք-Շահնազարեան, Ա. Հէջուբեան, Գ. Կշիմօվսկի, Տ. Հէջուբեան, Ա. Յովհաննիսեան, Ա. Մէլիք-Շահնազարեան, Ե. Բագրատունի։

—

Յ. Գ. Խնդրում ենք մեր ընկերներին, որոնք գտնվում են Կովկասի միւս քաղաքներում և որոնք ցանկանում են միանալ այս ըէզօլիւցիային, մտնել մեզ հետ նամակագրութեան հետևեալ հասցէով. Թիֆլիս՝ ուս. Ա. Հէդժուբով, Կօչուբէյևսկայա № 21.

## ԲԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԵՒՐՕՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՑ

—

Եւրօպական մամուլը շարունակում է մեծ ուշադրութեամբ հետևել Ռուսաստանում պատահող դէպքերին։ Մեր ձեռքն հասած թերթերը՝ գլխաւորապէս անգլիական՝ լիքն են Կովկասի վերաբերեալ տեղեկութիւններով և

խորհրդածութիւններով։ Նրանց հաղորդած տեղեկութիւնները ըստ մեծի մասին ճիշդ են, բայց մեզ համար նոր չեն։ Իսկ խորհրդածութիւնները առանց բացառութեան ուղղված են ի դատապարտութիւն ռուսական վարչութեան ձեւին, որ բարեբախտաբար արդէն մոռացման է, թէև ճգնում է իր ճիրաններից բաց չը թողնել իր նախկին զոհերին, արդարացնելով իր վրա մեր ճարտասան-մատենագրի խօսքերը՝ «Արջ օրհասակաճ ճզօրագոյնս կուլիս»...։ Morning Post հոկտեմբերի 5-ի համարի առաջնորդողում ասում է. «Ոչ մի կասկածի տեղ չը կայ, որ Ռուսաստանն այժմ քաղում է դառն պտուղները այն քաղաքականութեան, որ նա ստանձնել էր, տեղական հակակրութիւնները քաջալերելով իր կառավարչական գործը դիւրացնելու համար։ Ինչ անընդունակութիւն որ նա ցոյց տուեց Մանջուրական պատերազմի դաշտում իր զինուորական կազմակերպութեան մէջ, նոյն անընդունակութիւնը նա երևան հանեց այժմ նաև Կովկասի քաղաքացիական վարչութեանը մէջ»։

Լիվրպուլի առաջնակարգ լրագիրը՝ «Liverpool Post» հոկտ.9-ի համարում՝ խօսելով անգլիական ֆիրմաների Բագուում ունեցած կորուստների մասին, գրում է՝ «Գրեթէ վեց միլիոն ֆունտ ոսկի դրամագլուխ կայ դրված Բագուի նաւթային գործերում, որի կէսը կորած պէտք է համարել։ Պէտք է ռուսաց կառավարութիւնից պահանջել այդ կորուստը. բայց նա յայտնել է, որ իր վրա չէ ընդունում ոչ մի պատասխանատուութիւն, որը համահաւասար է ասելուն թէ նա մերժում է ճանաչել մի օրինաւոր կառավարութեան տարրական պարտականութիւնները»։ Globe դեռ ևս իր սեպտ. 30-ի համարում «Կովկասի անարխիան» վերնագրով յօդուածում գրեթէ ճարգարէաբար այն միտքն էր յայտնում, թէև առ այժմ ըստ երևոյթին Կովկասում, կոտորածները և կողոպուտները դադարել են բայց նրանք հաւանականաբար կը կրկնվեն, որովհետև «օրվայ օրէնսդիրը ամբոխն է այնտեղ»։ Եւ այդպէս՝ գրեթէ բոլոր լրագիրները։ Իսկ պատկերազարդ թերթերը հրատարակում են տեսարաններ հայ-թիւրքական կոտորածներից։

Կովկասի դէպքերը տեղն ու տեղը ուսումնասիրելու համար եկել էին մեզ մօտ նաև յատուկ թղթակիցներ, որոնց թղթակցութիւնները մեծ հետաքրքրութիւն են յարուցել բոլոր եւրոպական լրագիրներում։ Ամեն անդամ, որ նրանք որ և է կարևոր բան հեռագրում են իրանց թերթին, անմիջապէս այդ լուրը հաղորդվում է ուրիշ լրագիրներին հեռագրով կամ թղթակցութիւնների ձևով։ Ֆրանսիական Le Journal թերթի սեփական թղթակցի Թիֆլիսից ուղղած հեռագիրները Dalziel և Central News հեռագրական գործակալութիւնները հաղորդում էին անմիջապէս օտար թերթերին։ Բայց անշուշտ ամենից կաքաւոր տեղը գրաւում է անգլիական «Times»-ը, որի յատուկ թղթակիցը ահա մի քանի ամիս է շրջում է Կովկասում և որի հաղորդած տեղեկութիւնները մեծ ուշադրութիւն են հրաւիրել իրանց վրա։ «Pall Mall Gazette» թերթը Կովկասի դէպքերի մասին խօսելիս «Times»-ի թղթակցին անուանում է «մեծապէս յարգի թղթակից, որի դիտողութիւնները «Times»-ի էջերում ուշադրաւ տեղ են գրաւում»։ Այս թղթակիցը տպել է «Times»-ում երկու նոր թղթակցութիւններ հայ-թուրքական ընդհարումների և յարաբերութիւնների մասին, որոնց առիթով խմբագրութիւնն էլ իր կողմից մի ընդարձակ առաջնորդող է տպել (հոկտեմբերի 14)։ Թղթակիցը քննում է այն հարցը, թէ ո՞վ է սկիզբ տուել ընդհարումների։ Թուրքերը գանգատվում են, ասում է նա, հայ յեղ. կոմիտէներից և ամբողջ պատասխանատուութիւնը գցում են նրանց, հայ մամուլի և հայերից ներշնչված ռուսական մամուլի վրա։ Ադայեվը, այդ՝ Ռընանի աշակերտը, ինչպէս նա կոչել է ինքն իրան, ասել է թղթակցին, թէ թուրքերը պարկեշտ ժողովուրդ են, բայց ազէտ են և շահագործվում են հայերի կողմից։ Այս անկիրթ ժողովուրդը, ասել է նա, ցաւով տեսնում է թէ հայերը 30 տարի առաջ երբ Բագու եկան, պարզ մուրացկաններ էին, իսկ այժմ հարստացել, տիրապետող են դառել, և չեն թողնում, որ բիրժայի կոմիտէում և նաւթարդիւնաբերողների խորհրդում մահմեդական անդամ ընտրվի։ Բացի դրանից նրանք չարախօսում են ռուսների մօտ թուրքերի մասին։ Ահա սրանք են Բագուի թուրքերի հիմնական գանգատները հայերի դէմ։

Այս գանգատների հիմնաւորութեանը վրա կասկածում են թէ թղթակիցը և թէ նոյն ինքը «Թայմզ»։ Թղթակիցը մանրամասն հետազօտելով հայերի դէմ՝ թէ թուրքերի և թէ օտարների կողմից յայտնված գանգատները, գալիս է այն եզրակացութեան, թէ հայերի դէմ ուղղված մեղադրանքները փաստերով չեն հաստատվում։ Նա բացարձակապէս հերքում է թէ հայերը սկիզբ դրած լինեն ընդհարումներին։ Նա արդարացնում է մասամբ նոյն իսկ Հ. Յ. Դաշնակցութեան կոմիտէներին, որոնք մեծ եռանդով պաշտպանում էին հայերին թուրքերի յարձակումների դէմ և ահա այս անսպասելի ուժեղ թշնամիներին հանդիպելով թուրքերը, սկսեցին բոլոր յուզմունքի պատճառները և գրգռումները նրանց վերագրել։

Բագուի օտարահպատակների հակահայկական զգացմունքը թղթակիցը մեկնում է նրանով, որ վերջին տարիների գործադուլների մէջ հայ բանուորները մեծ մասնակցութիւն են ունեցել. իսկ հայ նաւթարդիւնաբերողները և վաճառականները աջող կերպով մրցում են արդիւնաբերական ասպարէզի վրա։

«Թայմզ»-ի խմբագրութիւնը կատարելապէս համաձայնում է իր թղթակցի հետ, գտնելով որ նրա առաջ բերած օրինակները և փաստերը հիմնաւոր են։ «Թայմզ»-ի առաջնորդողը վերջանում է հետևեալ տողերով. «Այդ յուզված երկրում կարգ ու կանոնը կարող է վերահաստատվել միայն այն ժամանակ, երբ ռուս կառավարութիւնը թողնէ մի ցեղը միւսի դէմ գրգռելու իր թրքական ստոր քաղաքականութիւնը և որոշ կերպով ցոյց տայ թէ օրէնքի առջև բոլորը հաւասար են»։

Ս.

## ՆԱՄԱԿ ՐՕՍՏՕՎԻՑ

Հոկտեմբերի 22-ին

Երբ լայնատարած Ռուսաստանի ամեն մի անկիւնում անկարգութիւններ ու կոտորածներ էին կատարվում, Ռոստովում, այսպիսի մի բազմամարդ, խառն ու առևտրական նշանաւոր կենտրոնում, կատարեալ հանգստութիւն էր։ Իմանալով լրագիրներից դանդաղ տեղերում կատարվող կոտորածների մասին, մենք տխրում էինք, մի և նոյն ժամանակ մխիթարվում, որ Ռոստովն ու Նախիջևանը բացառութիւն են կազմում։ Սակայն վախը սրտերիս մէջ էր։ Սարսափում էինք, չը լինի թէ այստեղ ևս կոտորած լինի։

Անկարգութիւնների ամենավտանգաւոր օրը ենթադրում էին փետրվարի 19-ը, ճորտերի ազատման տարեդարձը։ Օր առաջ շատ ընտանիքներ քաղաքից հեռացան, ով կարող էր վաղօրօք տնային պաշարի պատրաստութիւնը տեսան։ Խանութները փակ էին, սպասողական լարված դրութիւն էր։ Սակայն փետրվարի 19-ը սովորականից էլ աւելի խաղաղ անցաւ։ Այնուհետև անկարգութիւնների վտանգաւոր ժամանակ էր օգոստոսի վերջերը, երբ մեր շրջանում կատարվում էր պահեստի զինուորների ընդհանուր մոբիլիզացիա։ Հակառակ ամենքի սպասածին, մոբիլիզացիան նոյնպէս խաղաղ անցաւ։ Բանուորական և ուսանողական կարճաւոր գործադուլները լուրջ անկարգութիւնների առիթ չէին տալիս։

Վերջապէս հոկտեմբերի 18-ին հեռագիրները աւետեցին մեզ Թագաւոր Կայսրի բաղձալի հրովարտակը։ Հիմնարկութիւններն ու խանութները իսկոյն փակվեցին, անվախ համարձակ ժողովներ, բազմամարդ միտինգներ կազմվեցին։ Ազատութիւն հնչեց ամեն կողմերից։ Մի ծանր բեռ վզից վայր գլորվեց։ Փառք Աստուծու բացականչեցինք—սրանից յետոյ պետութեան մէջ ամեն բան լաւին կը դառնայ, կարելի կը լինի ազատ շունչ քաշել, մարդու պէս ապրել։

Նախապէս կազմած պարզ ծրագրով վրձռել էին հրէաներին բնաջինջ անել։ Յանուն ազգասիրութեան, յանուն քրիստոնէութեան ու հայրենիքի բարօրութեան ազդեցիկ մարդկանց ղեկավարութեամբ սև հարիւրեակը սկսեց գործել։ Երեք օր շարունակ հրէաներին կոտորում էին, կողոպտում, այրում նրանց «ունեցածը չունեցածը»։ «Ալան թալանի» հէնց առաջի րօպէին շատ ազնիւ քաջեր պաշարվածներին օգնել ցանկացան։ Երկաթուղային անձնուրաց բանուորները պաշտպանողական խմբեր կազմեցին։ Մի կողմից սրանք, միւս կողմից հրէայ երիտասարդներից կազմակերպված ինքնապաշտպանութիւնը խուլիգաններին դիմադրութիւն ցոյց տուին։ Նրանք կարող էին բոլոր աւազակներին մի րօպէի մէջ ցիր ու ցան անել, սակայն. զալպերից ընկան քաջերը, և սրիկաները, զգալով զօրեղ հովանաւորութիւն, թև թիկունք առան, սառնասիրտ կերպով շարունակեցին գզել գզգզել իրանց «զօրիչը»։ Երբ հրդեհի վտանգը «գլխաւորների» կաշուին մօտեցաւ, ջարդին վերջ դնել իսկոյն հրամայեցին։ Դիմակը պատռվեց։ Աղմինիսարացիան ցոյց տուեց իր հոգու այլանդակութիւնը։

Այսօր, հոկտեմբերի 21-ին, խաղաղ է, քաղաքը ներկայացնում և համաշխարհային տխուր ցուցահանդէս։ Ամեն կողմերից խումբ-խումբ գալիս են անցած սև քամու աւերածները տեսնելու, հոյակապ շէնքերից մնացած մոխրակոյտերը դիտելու։ Կարմիր Խաչի հիւանդանոցում սրտաճմլիկ տեսարան է. մոայլ նրկուղների մէջ ընկած են սպանվածների այլանդակ դիակները, ռուս, հրէայ կողք-կողքի. այստեղ նրանք պառկած են. հաւասար են. չորս կողմից լացի ու հեծեծանքի ձայներ են լսվում. փնտռում են մարդիկ իրանց սիրելիներին։ Ահա մի երիտասարդ կին սրտապատառ կանչեց, դիակների մէջ նա եղբօրը գտաւ, ընդհանուր լացի, հառաչանքների մէջ խեղճ կնոջ ձայնը խեղդվեց։ Երկար կանգնել այստեղ անկարելի է։ Սիրտդ խառնվում է, աչքերդ լցվում, դիակներին նայում ես մի անգամ և դուրս ես փախչում և ծանր տպաւորութեան տակ ակամայ բացականչում ես. «մարդիկ գազան են», մինչև երբ պիտի նրանք իրար միս ուտեն»։ Եթէ ընական պատահարների, անակնկալ պատուհասների դէմ մաքառել դեռ անզօր են մարդիկ, միթէ, արդարև, անհնարին է մի կերպ համաձայնութեան գալ, իրար հետ համերաշխ ապրել։

Յ. Խաչատրեան

## ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Հոկտեմբերի 24-ին

Պահպանողական բանակը, զէնքի կանչելով խաւար ու մութ ուժերին, խիստ ոգևորութիւն է ցոյց տալիս այն օրից յետ, երբ ծայրահեղ բանակները ոտնեցին իրանց յաղթութիւնը։ Ահա երեք օր է, շրջելով փողոցներում ազգային դրօշակներով, Կայսրի պատկերով մի հակադիր ցոյց են կազմում։ Ոչ ոք դրանց դէմ չէ, ի հարկէ,—բայց բանը նրանումն է, որ սև ուժերը բռնի կերպով տարածում են, թէ ներկայ շարժման մէջ մեղաւոր են հայերը, ջհուդները,—ուրեմն ջարդեցէք սրանց... Պատահում են ճանապարհին հայի, խփում են, հանդիպում են հրէի՝ հալածում են, տեսնում են, անմեղ մանկահասակ հայ դիմնազիստի, ապտակում են, գոռալով՝ «չէ՞ք տեսնում, որ մենք մարշ ենք նուագում և գլխարկներդ չէք հանում»։ Իսկ երբ կլուբի դահլիճում նշանակած էր սոց.-դեմօկրատ կուսակցութեան միտինգը, շրջապատել էին տունը, քարեր էին գցում և ջարդում պատուհանները, այնպէս որ մարդիկ ստիպված եղան հեռախօսով դիմել նահանգապետին, պահանջել պաշտպանութիւն և մուտքը բռնել տուեցին զինուած բանուորներով։

Բանն այնտեղ հասաւ, որ ծայրահեղ կուսակցութիւնները վճռեցին առայժմ պահել հեռու իրանց հրապարակային միտինգներից և արհամարհել խուլիգանական ցոյցերը։ Մութ ոյժերը այդ երևոյթը վերագրում են իրանց յաղթութեան և հաւատացած են, որ այդ միջոցով թուլացրին հակառակ շարժումները և այն տպաւորութիւնը, որը առաջին անգամ բռնկեց ազատաբար շարժումների շնորհիւ։ Իսկ դրանց ծայրահեղ ներկայացուցիչները գնում են աւելի հեռու և շարունակ քարոզում են, թէ սոցիալիստներին վերջ տալ կարելի է միայն կոտորելով, միայն ջարդելով։ Ձայներ են տարածում, թէ ամբոխը պահանջում է միտինգում խօսողներին։

Այժմ պահպանողական բանակը կարող է հանգիստ լինել։ Ի հարկէ պահպանողականները, հալածելու համար սոցիալիստներին, չեն ամաչում դաշնակցութիւն կազմել սև հարիւրակի հետ, նոյն իսկ զինել դրանց և սուտ լուրեր տարածել։ Դա մի ընդարձակ ծրագիր է դրանց կողմից, որ երևան է եկել ամեն տեղ, ամեն երկրում, երբ ազատաբար շարժումը վրա է հասել։

Սև հարիւրակի ներկայ ծառայութիւնն եղաւ նրա մէջ, որ բացեց մեծամասնութեան աչքերը, երևաց, որ ազատութիւն հրատարակելուց յետոյ էլ դեռ խախուտ է մեր պետական կազմը, որ ազատութիւնը դեռ ապահով չէ և թէ պէտք է անշուշտ ձեռք բերել կտրական բարենորոգումներ։

Դրա համար էլ շնորհակալ ենք սև հարիւրակից։

Ս. Տոփանեան

## ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Տպարանական մեքենայի կոտրվելու պատճառով «Մշակի» երէկվայ համարը չը կարողացաւ լոյս տեսնել երէկ առաւօտ և պատրաստ եղաւ միայն ճաշից յետոյ։

—

Թիֆլիսի բոլոր միջնակարգ և տարրական ուսումնարանների ուսուցիչների բիւրօն յայտարարում է, որ համաձայն, մանկավարժների և աշակերտների որոշման, Թիֆլիսի բոլոր ուսումնարանները բացվում են հինգշաբթի, նոյեմբերի 10-ին։

—

Այն երիտասարդները, որոնք զինուորական վիճակ են հանել Թիֆլիսի գաւառի առաջին մասում, նրանցից ոչ մէկը չէ ներկայացել բժշկական քննութեան։

—

Շուշու աղէտից փրկվածների օգտին տրացանք. 1) Խաղէտուն գիւղ պօրուչիկ Փիրումեանից 25 ր., 2) Պետրո-Ալէքսանդրովսկից Խիվայի խանութեան մէջ ապրող հայերի շրջանում Ներսէս քահ. Աբրահամեանի ձեռքով հաւաքած 234 ր., 3) Մ. Մկրտչեանից (Ռուբանովկա) 10 ր., 4) Բէլի-Կլիչից Գր. Ստեփանեանի ձեռքով հաւաքած 17 ր. 50 կ., 5) Բախշի Ղուկասեանից (Կելիֆ) 7 ր., 6) Սուխումից Ծատուրեանի ձեռքով հաւաքած 10 ր. 53 կ., 7) Ախալգորում № ձեռքով մի քանի անձնաւորութիւններից հաւաքած 69 ր. 50 կ., 8) Բութայիսի մի քանի հայ զինուորներից՝ Գ. Զարախեանի ձեռքով հաւաքած 4 ր., 9) Զերնեաեվի հայ հասարակութիւնից Իսայ Իսպիրեանի ձեռքով հաւաքած 55 ր. 50 կ., 10) Ստրատովից՝ Գ. Խարագեանի միջոցով հաւաքած 106 ր. 87 կոպէկ։

—

Երէկ, նոյեմբերի 6-ին, Կաթօլիչեսկայա փողոցի վրա, մի անյայտ անձն վիրաւորեց ըէվօլվերի երեք հարուածներով դատաստանական քննիչ Նիկոլայ Ցադէիչ Խէզանովին։ Գնդակներից մէկը դիպել է ձեռքին, իսկ միւսը փորին։ Վիրաւորը տարվեց, հիւանդանոց։

—

Երէկ, նոյեմբերի 9-ին, կէսօրից յետոյ մէկ ժամին Թիֆլիսի Ծխնէտսկայա փողոցը մի տարօրինակ տեսարան էր ներկայացնում։ Մի քանի հարիւր հոգուց բաղկացած ամբոխը ուղեկցում էր մի էշի, որի վրա նստած էր երեսին սև մուր քսած մի երիտասարդ, էշի սանձը և պոչը բռնած ունէին նոյնպէս երեսին սև մուր քսած երկու երիտասարդներ։ Բանից երևում է, որ դրանք վերոյիշեալ թաղում գողութիւն էին արել, կոտրելով մի խանութ։ Թաղի երիտասարդները բռնում են դրանց և այդ տարօրինակ պատժի են ենթարկում։

—

Ղազախի գաւառի նախկին գաւառապետ Արնօլդ, ինչպէս յայտնի է, նշանակվեց Սենակի գաւառապետ։ Այժմ «Ցնօբիս-Փուրցելի» լրագիրը լսել է, որ նահանգապետ Ստարօսէլսկին չէ կամենում, որ գաւառապետ նշանակվի Թիֆլիսից և միջնորդութիւն է յարուցել, որ Արնօլդին Սենակի գաւառապետ նշանակելու կարգադրութիւնը վերացվի։

—

Կովկասի զօրքերի հրամանատարը միջնորդել է, որ գանձարանից նպաստ տրվի այն շատ և օբեր-օֆիցերներին, որոնք մասնակցել են ներքին խառնակութիւնները զսպելում, ընտանիքաւորներին 4 ամսվայ, ամուրիներին 2 ամսվայ ռոճիկի չափով։ Այժմ զինուորական մինիստրը հեռագրով հարցրել է, թէ մօտաւորապէս որքան գումար է հարկաւորվում այդ նպաստի համար։ Տեղական գլխաւոր շտաբը կարգադրել է, որ ամենակարճ միջոցում տեղեկութիւններ հաւաքեն յիշեալ օֆիցերների ընտանիքաւորը և ամուրիների քանակութեան մասին։

—

Գողերի կատարած վայրենութիւններից

էլի մի փաստ։ Տիկին Փ-ն Սուզերնի փողոցով, կօդակների ախոռատան մօտով անցնելիս յանկարծ լսում է «տեսէք սև մազերով արմեաշկա է, քաշեցէք նրան ախոռատունը»։ այդ նոյն րօպէին երկու կօդակ արագ հետևում են տիկնոջը։ Տիկին Փ-ն հազիւ հազ փախուստով ազատվում է այդ վայրենիներից։

—

Մայրաքաղաքի լրագիրներին հետևողներն անշուշտ նկատած կը լինեն, որ Ռուսաստանում սկսում են երևան գալ և որոշ գոյն ստանալ մի քանի կուսակցութիւններ։ Նրանք դեռ այնքան բազմաթիւ չեն, որքան, օրինակ, գերմանական բայխստագում, ուր տիրում են 17 կուսակցութիւններ, իսկ մեզանում եղած և կազմվող կուսակցութիւնների թիւը դեռ հազիւ հասնում է 9-ի։ Դրանք են. ա) աջակողմեան խումբ —1) Միսպետականներ («Ռուս մարդկանց դաշնակցութիւն»), 2) Արդիւնաբերողների և առևտրականների ռուսական կուսակցութիւն, բ) Կենտրօն—3) Առաջդիմական արդիւնաբերական կուսակցութիւն, 4) Իրաւակարգի կուսակցութիւն, գ) Ձախաւոր ձախակողմեաններ 5) Սահմանադրական դէմօկրատիական կուսակցութիւն, 6) Արմատական կուսակցութիւն, 7) Սօցիալական և տնտեսական բարենորոգումների կուսակցութիւն և դ) Ծայրայեղ ձախակողմեան, 8) Ռուսական Սօցիալ-Դէմօկրատիական կուսակցութիւն (բաժանված 2 մասի—«Մեծամասնութիւն» և «Փոքրամասնութիւն։») և 9) Սոցիալիստա-Յեղափոխական կուսակցութիւն։—Բնականաբար դրանք միայն բուն ռուսական կուսակցութիւններն են, դրանց մէջ ամենևին չեն մտնում Ռուսաստանի բաղադրիչ մասերը կազմող ազգերի տեղական կուսակցութիւնները։

—

Պետերբուրգից հաղորդում են, որ կառավարական բարձր շրջաններում լուր է պատում, թէ եւրօպական պետութիւնները կառավարութեանը խմբական ազդարարութիւն են արել, որ՝ աչքի առաջ ունենալով Ռուսաստանում սկսվող անիշխանութիւնը և կառավարութեան ակներև անկարողութիւնը դրա դէմ կռուելու, նոյնպէս և այն, որ կառավարութիւնը չէ ցանկանում ընդառաջ գնալ քաղաքացիների պահանջներին,—պետութիւնները ստիպված կը լինեն Կրօնշտադտը ուղարկել մի միացեալ նաւատորմ և զօրքով դրաւել սահմանային բերդերը, որովհետև Ռուսաստանում շարունակվող անկարգութիւններից վնասվում են օտար երկրացիները և Ռուսական գործերում դետեղված կապիտալներն ու արժէքները։

—

„Р. Вѣд." լրագիրը հաղորդում է, որ լուրերին նայելով՝ արտասահմանեան բանկիրների մօտ սկսում է պակասել ռուսական դրամը նոյն իսկ ռուսական շտապողական կամ պայմանաժամով վճարումները կատարելու, և այդ տարեվերջին, երբ Ռուսաստանը ստիպված է ահագին գումարներ վճարել պայմանաժամով (սրօչնի) կուպօնների համար։

—

Պետերբուրգի Սինոդի աւագ-պրօկուրօր Օբօլենսկին յանձնել է սինոդի դիւանի քարտուղար Տերնաւցեվին, որը իրան ցոյց է տուել իբր համոզված կողմնակից ինքնակալութեան, մի քանի օրում կազմել ժողովրդական գրքոյկ, որով ցոյց տրվի սահմանադրական կառավարութեան ձևի լաւութիւնը։ «Нива Ж.» լրագիրն ասում է, որ այդ բրօշիւրից տպագրելու են հարիւր հազարաւոր օրինակներ և տարածելու են հասարակ ժողովրդի մէջ։—Ահաւասիկ ինչ է բիւրօկրատը. երէկ նա համոզված միապետական էր, իսկ այսօր «համոզված սահմանադրական»։

—

Տվերից հաղորդում են «Р. Вѣд.» լրագրին, որ այժմ համարեա վերջացել է այնտեղ կատարված աւերածութեան գործի քննութիւնը։ Քննութիւնը ցոյց տուեց, որ ադմինիստրացիան մասնակից է եղել սև հարիւրեակի քաջալերութիւններին։ Ոստիկանապետ պ. Կիրէեվսկու և երկու պրիստաւների դերը ուղղակի ոճրագործական է եղել։ Այդ գործի պատճառով արդէն ձերբակալված են 6 հոգի աւերածութեան մասնակիցներից։—Վերջապէս... վերջապէս։ Արդեօք ճրբ է ամեն տեղ՝ նոյն «ոճրագործ մասնակցութիւնը» բացվելու։

—

Ստացանք Նաղելի Թովմասեան և Բողդանովրիստաֆորեան Մելիք-Էյնաթեաններից ի յիշատակ իրանց հանգուցեալ քրոջ տիկ. Անթառամ Թովմասեան Մազմանեանցի, որի վաղաժամ մահը տեղի է ունեցել Ազուլիսում, փոխարէն հոգեհանգիստ կատարելու բարեգործական նպատակով 25 ռուբլի։

—

Կիեվից գրում են „Новая Жизнь" լրագրին. «Եկաւ Հէյդէնը իր քարտուղարի հետ՝ կատարելու քննութիւն տեղի ունեցած վերջին աւերածութեան մասին։ Նրան աջողվել է գտնել սև-հարիւրեակի կազմակերպիչ կօմիտէտը, աջողվեց բռնել բազմաթիւ գօկումէնտներ, որոնցից երևում է, որ նախ պէտք է կողոպտէին և կոտորէին հրէաներին, իսկ յետոյ պէտք է ջարդէին բոլոր ոստիկանական հսկողութեան տակ եղածներին։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

*8 նոյեմբերի*

ԿՕԳԷՆՀԱԳԷՆ, 7 նոյեմբերի։ Քրիստիան Թագաւորն ընդունեց նօրվէգիական պատգամաւորութիւնը։ Ստորտինգի նախագահ Բէրնէրը խնդրեց Թագաւորին, որ համաձայնվի Կարլոս իշխանի Նօրվէգիայի Թագն ընդունելուն։ Թագաւորը պատասխանեց մի ճառով, որով համաձայնութիւն տուեց և յայտնեց, որ կաղօթէ Աստուծուն, որ Կարլոսի ընտրութիւնը Եւրօպայի հիւսիսը երջանկութեան գիրկը տանէ և ամրապնդէ հիւսիսի ժողովրդների համերաշխութիւնը։ խնդրեց հաղորդել իր սրտագին ողջոյնը նորվէգիական ժողովրդին և օրհնեց թոռանը աջողութեամբ Թագաւորելու։

ՄՕՍԿՎԱ, 8 նոյեմբերի։ Բանւորները գործի են կանգնում։ Երկաթուղիները բանում են կանոնաւորպէս։ Երկաթուղու բանւորները բազմաթիւ հեռագիրներ են ստանում Ռուսաստանի զանազան տեղերից, որով նրանց ընկերները յանձնարարում են շարունակել աշխատանքները և հայրենիքի թշնամիների հացին իւղ չը քսել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 նոյեմբերի։ Միջնակարգ դպրոցների դասատուների խորհրդում՝ լուսաւորութեան մինիստրի նախագահութեամբ քննվում էր մանկավարժական խորհուրդների գործունէութեան հարցը։ Մինիստրը խոստացաւ լայնացնել նրանց իրաւասութիւնները։ Ընտրովի դիրեկտօրի և ինսպեկտօրի հարցը չանցաւ, հանդիպելով դիմադրութեան դասատուների կողմից։ Համալսարանի նոր կանոնադրութեան նախագիծը ուղարկվում է համալսարանների խորհուրդներին, առաջարկելով նրանց իրանց կարծիքները դրա մասին ուղարկել ոչ ուշ դեկտեմբերի վերջից, երբ մինիստրի նախագահութեամբ նորից խորհուրդ կը կազմվի՝ կարծիքները քննելու և կանոնադրութիւնը վերջնականապէս մշակելու։—Լրագիրները վաղը դուրս կը գան. տպարանները գործում են։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 նոյեմբերի։ Կրօնշտադտի բերդի կօմէնդանտը, աչքի առաջ ունենալով հոկտեմբերի 26 և 27-ի անկարգութիւնների հեղինակ նաւաստիների մասին տարածված լուրերը՝ թէ նրանք գնդակահար են եղած և ծովը նետված, յայտարարում է, որ ոչ ոք պատժի չէ ենթարկվել. կատարվում է նախնական օրինական քննութիւն, որի արդիւնքը դեռ յայտնի չէ։

ՄՕՍԿՎԱ, 8 նոյեմբերի։ Զեմստվային և քաղաքային գործիչների ժողովի նիստում կոմս Հէյդէնը վճռաբար դէմ է խօսում սահմանադիր ժողովի ներկայ րօպէում, երբ հարկաւոր է մի ուժեղ իշխանութիւն, ապահովված օրէնքներով։ Աւերածութեան ենթարկված քաղաքներն ու աւանները պէտք է ուղարկել սէնատորներ, պէտք է կազմել նահանգապետների մօտ խորհուրդներ տեղական ուժերից, պէտք է կազմել քաղաքացիների իրաւունքների կանոնաւոր պաշտպանութիւն դատական իշխանութեան միջոցով։ Առաջին նիստը վերջացաւ Բօբրինսկի ջերմ ճառով. նա յայտնեց, որ եթէ կառավարութիւնը կարիք ունի օժանդակութեան, պէտք է նրան տալ այդ օժանդակութիւնը՝ երբ հանդիսաւոր կերպով կերդվի հաւատարիմ մնալ այն ակտին, որը հին Ռուսաստանը բաժանում է նոր իրաւակարգի Ռուսաստանից։ Պէտք է օգնել կառավարութեանը հոկտ. 17-ի հիմնական օրէնքն իրագործելու խնդրում, բայց մինչ այդ կառավարութիւնը պէտք է կատարէ վստահութեան արժանի գործեր։

ՏԱԳԱՆՐՕԳ, 8 նոյեմբ։ Գործարանական բանւորների յուզումներն անցկացան, աշխատանքը շարունակվում է։

ՁԵՐՆԻԳՈՎ, 8 նոյեմբ։ Գեն.-ադիւտանտ Դուբասովը 2 օր մնալով Զերնիգովում, գտաւ որ բոլոր հնարաւոր միջոցները խառնակութիւնները դադարեցնելու համար իր ժամանակին ձեռք են առնված եղել և երէկ մեկնեց հիւսիսային գաւառները։ Անկարգութիւնները դադարեցին։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 8 նոյեմբ։ Ռուս-եապոնական դաշնագրի ստորագրութիւնների փոխանակումը կը կատարվի այստեղ նոյեմբերի 9-ին։

ՄՕՍԿՎԱ, 8 նոյեմբ։ Կոմս Հէյդէնի նախագահութեամբ՝ զեմստվային գործիչների համաժողովում շարունակվում էին վէճերը դէպի կոմս Վիտտէի կառավարութիւնը բռնելիք դիրքի մասին։ Հեռօրների մեծ մասը յանձնարարում էր ցոյց տալ վստահութիւն. նրանց թւումն էր նաև Եվգենի Տրուբէցկոյը և Պետերբուրգի ներկայացուցիչ Կրասովսկին, որոնք մասնանիշ էին անում, որ վստահութիւնը դէպի կառավարութիւնը և նրան օգնելը միակ միջոցներն են խառնակութիւններից ազատվելու, կարգը վերահաստատելու և բարենորոգում մտցնելու հոկտեմբերի 17-ի մանիֆէստի ոգով։—Համալսարանի խորհուրդը վճռեց փակել համալսարանը մինչև յունվարի 15-ը և յայտարարել հասարակութեանն այդ վճռի դրդիչ պատճառները։—Գիւղացիական համաժողովին մասնակցում են գլխաւորապէս զեմստվօներում ծառայող բժիշկները, գիւղատնտեսները, ստատիստիկները, ժուրնալիստները, փաստաբանները։ Գիւղացիները շատ քիչ են։ Համաժողովի բիւրօի ամբողջ կազմը ինտելլիգենտներն են։ Գիւղացիական բոլոր հեռօրները քաղաքացիներ և գործարանականներ են։ Համաժողովի նախագահ ընտրված է «Մաղուա» ֆիրմայի գործակատար Կուրչինը։

ԿՕՍՏՐՕՄԱ, 7 նոյեմբ։ Երէկ սահմանադրական կուսակցութեան անձերի խորհուրդը կարծիք յայտնեց, որ զեմստվային և քաղաքային գործիչների համաժողովը պէտք է կոմս Վիտտէի կառավարութեանը վստահութիւն ցոյց տայ, իբր միակ միջոցը խառնակութիւնների և գործադուլների առաջն առնելու և հոկտ. 17-ի մանիֆէստի սկզբունքները գործադրելու։

ՄՕՍԿՎԱ, 9 նոյեմբ։ Վախճանվեց գեներալ Շանեավսկին, որը նուիրել է ժողովրդական համալսարանի համար մի շէնք։

ՆՕՎՈՐՕՍՍԻՅՍԿ, 8 նոյեմբ։ Գործադուլ ապրին նաւահանգստի օրավարձով բանւորները, պահանջելով արտէլների ոչնչացում։

ՎԱՐՇԱՎԱ, 7 նոյեմբ։ Բոլոր գործարանները վերսկսում են աշխատանքները, բացի երկաթագործարաններից, ուր վէճ կայ գործադուլի օրերի համար լրիւ վարձատրութիւնը վճարելու մասին։

ՋԼԱՏՕՈՒՍՏ, 8 նոյեմբ։ Դումայի նիստում ընդունվեց միլիցիա հիմնելու առաջարկը։

ՏՕԿԻՕ, 7 նոյեմբ։ Նագասակիից հաղորդում են, որ երեկոյեան դադարեցին ռուսական փոխադրանաւերի վրա եղած խառնակութիւնները։ Ոստիկանութեան մի մասը հեռացված է։ Ռուս գերիները ուրիշ տեղերում էլ ցոյց են տալիս դժգոհութեան նշաններ։ Իշխանութիւնը վախենում է, որ խառնակութիւններ կարող են ծագել նաւերը ծով դուրս գալուց յետոյ։ Նաւապետները խնդրում են գերիներին Վլադիվոստոկ տեղափոխել մարտանաւերով։—Բօժեստվենսկին գտնվում է «Եարօսլաւլի» վրա։

ԼՕՆԴՕՆ, 7 նոյեմբերի։ Հայդ-Պարկում հաւաքված անաշխատանք բանւորների միտինգը շատ խաղաղ անցաւ։ Ճառախօսները մատնացոյց էին անում, որ իրանք ողորմութիւն ու բարեգործութիւն չեն ուզում, այլ աշխատանք։ Նրանք պահանջում են հասարակական աշխատանքներ կազմակերպել։

ՊԱՐԻԶ, 8 նոյեմբերի։ «Լիբերտէ»-ի կարծիքով ռուս ազատամիտները պէտք է օգնեն Վիտտէին և սպասեն լեհական հարցի լուծմանը մինչև Պետական Դումայի բացվելը։ Նոր սիստեմի յաղթանակը լեհերի վերաբերմամբ կը լինի վերջը բացառիկ միջոցների, բայց նա կը լինի նաև վախճան լեհերի անկախութեան երազների։

*8 նոյեմբերի*

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 նոյեմբերի։ «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ նոյեմբերի 6-ին, երեկոյեան 6 ժամին «Новое Время» լրագրի տպարանն եկան 100 մարդ բանւորների պատգամաւորների Խորհրդի գործադիր կօմիտէտի հրամանով տպելու համար «Բանւորական Պատգամաւորների Խորհրդի Տեղեկութիւնների» եօթերորդ համարը։ Տըպարանի կառավարիչը և ծառաները կալանաւորվեցին։ Եկողները «Տեղեկութիւնները» տպեցին բօտացիօն մեքենայի վրա։ Ամբողջ ժամանակը տպարանի դռների մօտ պահապան էր կանգնած զինաւորված ամբոխը։ Տպարան եկող ծառայողներն ևս կալանաւորվում էին։ Տպագրութիւնն աւարտվեց առաւօտեան 10 ժամին։ Տպված լրագրի բոլոր օրինակները տարան կառքերով։ 11 ժամին տպարանը մաքրվեց։ Ոստիկանութիւնը միայն հետևեալ օրն իմացաւ այդ բոլորի մասին։

Վարշավեան երկաթուղու Պոկով կայարանի 70 ծառայողներ «Новое Время» լրագրի խմբագրութեանն ուղարկած նամակի մէջ բողոքում են դաշնակցութիւնների դաշնակցութեան դէմ, որը պետական լրջութիւն ունեցող հարցերում կամայականօրէն իւրացրել է ժամանակաւոր կառավարութեան դիկտատօրական իշխանութիւնը։ «Биржев. Вѣдомости» լրագիրը հաղորդում է ժողովրդական լուսաւորութեան նոր մինիստրի հետ ունեցած խօսակցութիւնը։ Նրա կարծիքով մինիստրը պէտք է լինի աւելի քաղաքական, քան վարչական գործիչ։ Մեծ չարիք է նա համարում բազմաթիւ զանազան յանձնաժողովները, որ ինքն մտադրութիւն ունի շատ կրճատել, իրան կողմնակից է յայտարարում բոլոր ազատութիւնների, կաշխատէ կեանքի մէջ մտցնել նրանց։ Ծնողները ուսուցիչների հետ միասին պէտք է գտնեն միջնակարգ դպրոցները խաղաղացնելու եղանակները։ Կանանց բարձրագոյն դպրոցներն ընդունելու հարցը կաշխատէ դրական կերպով լուծել։

„Русь" լրագիրն ասում է, որ վերջին գործադուլի անաջողութիւնը ցոյց տուեց, որ բանւորների գործողութիւնները կարող են մեծ ոյժ ունենալ միմիայն այն ժամանակ, երբ այդ գործողութիւնները պաշտպանութիւն են գտնում հասարակութեան և ժողովրդի կողմից։ Խմբագրութեան ուղղած նամակի մէջ Հէնրիխ Սենկեվիչ յայտարարում է, որ լեհ ժողովուրդը հեռու է զինաւորված ապստամբութեան մտքից։

ՎԱՐՇԱՎԱ։ 8 նոյեմբերի։ Շատ առևտրականներ վճարումները յետաձգում են այն քաղաքների գնողներին, որոնք ենթարկվել են ջարդերին։ Քաղաքը հանգիստ է, առևտուրը բնական ընթացքն ունի։ Ածուխի պակասութեան պատճառով աշխատանքներ չեն կարողանում սկսել բոլոր գործարաններում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 նոյեմբերի։ Նոյեմբերի վերջը Սեվաստապօլի զինաւորական-ծովային դատարանում նշանակված է „Князь Потемкинъ Таврическій" զրահակրի վրա եղած ապստամբութեան գործի քննութիւնը։ Մեղադրվում են յիսունից աւելի նաւաստիներ, պրապօրշչիկ Ալէկսէեվ, բժիշկ Դալէնկօ, պօդպօրուչիկ Կալիժնով և ուրիշները։

Պետերբուրգի քաղաքագլուխը հաղորդում է, որ ներքին գործերի մինիստրը կարգադրեց, որ եթէ նոր գործադուլ լինի քաղաքային տելեֆօնային կայարանում, բոլոր ծառայողներին արձակել, քաղաքի հետ պայմանագիրը քանդել և ձեռնարկութիւնը յարքունիս գրաւել։

ՍԻԶՐԱՆ, 8 նոյեմբերի։ Այսօր սկսեցին գալ պատերազմական գործողութիւնների բեմից վերադարձող ծովագնացների առաջին խմբերը, որոնք իրանց անկարգ են պահում։ Կայարանը պաշտպանելու համար արտակարգ կերպով կանչված են զօրքեր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 նոյեմբերի։ Բարձրագոյն ուկազներ։ Հեծելազօրքի գեներալ Բիլդերլինգին հրամայված է լինել զինուորական խորհրդի անդամ, Նիժէգօրոդեան նահանգապետ Ունտերբինգօրին հրամայված է ներկայ լինել սենատում։ Ներքին գործերի մինիստրութեան ընդհանուր գործերի դիրեկտօր նշանակված է Արբուզով, հոգևոր գործերի և օտար դաւանութիւնների դեպարտամենտի դիրեկտօր նշանակված է Վլադիմիրով։

ԱՍՏՐԱԽԱՆ, 8 նոյեմբերի։ Կիրգիզեան ամառանոցում նոյեմբերի 1-ին, 40 հիւղերում եղել են ժանտախտով 70 հիւանդացողներ, մինչև նոյեմբերի 4-ը—41 մահվան դէպք, նոյեմբերի 4-ը Աստրախանից եօթանասուն վերստ հեռաւորութեամբ հիւանդացան 6, մեռան երկուսը։

ԼՕՆԴՕՆ, 8 նոյեմբերի։ Այսօր 8000 հոգուց բաղկացած անգործների ահագին ամբոխը թափօրով գնաց դէպի Լօնդոն Հայդ-Պարկով։ Նրանց հետ միացան ուրիշ անձինք։ Թափօրը գնում էր կարմիր դրօշակներով և «Բարեգործութիւն չենք ուզում, աշխատանք տուէք» մակագրութեամբ.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


**Հ Ի Ւ Ա Ն Դ Ա Ն Ո Ց**
ԲԺԻՇՆԵՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
մշտական ժամակարգներով։
Նելիդովէթինսկայա փողոց, 101, տելէֆոն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղա ին, ներքին հ. և ելեքտրօ-բուժութիւն։
Պ. Ն. ԴԷՄԵՐԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԳԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Պ. ԿԻՄՕՆՑ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՋԻԵԱՆ 1—3 ժ. քթի, կոկորդի և ականջի հ.
Գ. Ա. ԲԷՑԷՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում էլեկտրօլոգիական, բակտերիօլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և սանտունների (кормилица) ընտրողութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օգէրացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Դիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմերներից։
(Հ.տ.կ.) 15—100

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
**Բ. Նաւասարդեան**
Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը։ 19—20

**ԲԺ. Ա. ՄԻԹԱՐԵԱՆ**
Ընդունում է մանաւորապէս սիֆիլիսի, միզային, վեներական և մորթու սխալ ունեցող հիւանդներին ամեն օր առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Գասկեվիչա փողոց. № 33/15 տ. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(տ.օ.) 14—100

Բ Ժ Ի Շ Կ
**Լեւոն Օհանջանեան**
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպեկտի և Կոդեասկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կոդեասկի փողոցից № 2.
(տ. օ.) 52—300

**ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ**
նախկին օրդինատոր Մոսկվայի համալսարանի կլինիկայի
Վերսկսեց ընդունելութիւնը յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնն ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան։ Բուրշչնակի փող. № 1, «Պօժարնի կոմանդի» դիմացը. տելէֆոն № 11.
(տ. օ.) 18—20

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
**Ա. Քարաձեան**
Ընդունում է ներքին և ջղային հիւանդութիւն ունեցողներին առաւօտեան 9—11 ժ.։ երեկոյեան 5—7 Վելիամինովսկայա փողոց, տ. Սաֆարովի, № 13. տելէֆոն № 1061։ (շ. ե. հ.) 19—20

**ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱՊԱՆ ԿԱԲԻՆԷՏ**
Բժիշկ Միքայել Գեղեկանովի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը
Կօրգանովսկայա փող. № 20 Վերայում։ Սեփական տ., տելէֆոն № 791։ (տ. օ.) 25—150

ԹԻՖԼԻՍԻ ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
Վաղը, ուրբաթ, նոյեմբերի 11-ին
կը ներկայացվի
Տ Ր Ա Վ Ի Ա Տ Ա
օպերա 4 գործ. երաժ. Վերդի-ի Թարգ. Գուտխէլի։
Մասնակցում են տ.տ. Դաշինսկայաէ, Կարպօվա, Զասլավսկայաէ. պ.պ. Կօլօսով, Եւլախով, Տօմաշեվիչ, Վօլսկի, Դեմիանենկօ, Փիլիպով, Շէին։
Պարերը կը դնէ բալէտմէյստր պ. Բեկէֆի
Սկիզբը 8 ժամին
Շաբաթ, նոյեմբերի 12-ին, սովորական գնէրով կը ներկայացվի «ԶԱԶԱ» օպերա 4 գործ. երաժ. Լէօնկօվալօի, Թարգմ. Գօրչակօվայի։
Պատրաստում են ներկայացնելու ՉԵՐԵՎԻՉԿԻ օպերա 4 գործ. երաժ. Չայկօվսկու, «ԳԷՑՇԱ» օպերետտա Բիդնէյ Զօնսի, «ՓԻԳԱՐՕԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ», Մօցարտի։
Տօմսակները ծախվում են։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Յայտնում է, որ 1905 թ-ի նոյեմբերի 19-ին, ցերեկվայ ժամը 12-ին նշանակված է աճուրդ Վերայի կամուրջով անցնող կառքերի և տաւարների համար վերցվող տուրքը կապալով տալու համար։ Պայմանների հետ կարելի է ծանօթանալ ամեն օր Ուպրաւայի IV բաժնում, առաւօտեան ժամը 10—2-ը։
1—1

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
I
**ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ**
ռուսերէնից հայերէն
Լոյս տեսաւ **ՈՒԹԵՐՈՐԴ** պրակը,
Գինը 1 ր. 20 կոպ.
Ամբողջ բառարանի բաժանորդագրին է 7 ր., ճանապարհածախսով 8 ռուբլի, Փառատոմար 9 ր.։ Հեղինակին դիմողներ ճանապարհածախս չեն վճարում։ Դիմել հեղինակին հետևեալ պարզ հասցէով. Тифлисъ. А. С. Дагбашяну. Թիֆլիսում բաժանորդ կարելի է գրվել «Գուտենբերգ» դրատանութիւնում։

II
**ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ**
հայերէնից ռուսերէն
Լոյս տեսաւ ԱՌԱՋԻՆ պրակը։ Գինը 1 ր.։ Ամբողջ բառարանի բաժանորդագրինը 5 ր., առաջին բառարանի բաժանորդների համար 4 ր. Դրպանի բառարան ռուսերէնից հայերէն։
Բաժանորդագրինը 2 ր. 50 կ.։
Դիմել հեղինակին վերոյիշեալ հասցէով։

Բ Ա Ժ Ի Շ Կ
**Ս. ՄԻՐԶՈՅԵԱՆ**
Մասնագէտ Աչքի հիւանդութիւնների, վերակսեց հիւանդների ընդունելութիւնը։ Առաւօտեան 1—3 ժամը. երեկոյեան 5—6 ժամը։ Սօլօլակայա փող. սեփ. տ.։ 20—25

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
յայտարարում է, որ այսօր նոյեմբերի 10-ին, չորեքշաբթի երեկոյեան մաքրելու են Դիդուբէին, Կուկիայ ին, Զուղուբէթին, Վօրօնցօվի խճուղուն, Խարիուխին և Կուրի աջ ափին մինչև Գօլովինսկի պրօսպէկտ ջուր մատակարարող ջրամբարը, իսկ նոյեմբերի 13-ին, կիրակի երեկոյեան մաքրելու են Կուրի աջ ափը, Պրօսպէկտից վերև, Դանօվսկի փողոցին, Օլգինսկի և Ցղնէթսկի փողոցներին, Թեքնոտ փողոցներով միասին, Դաւթեան և Վօղնեսենսկի հրապարակներին, Հալաբարին և Նաւթլուղին ջուր մատակարարող ամբարը. խնդրում է հասարակութեանը իր ժամանակին ջուր վերցնել։ 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻ Ց ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
տրակտիրային զբաղմունքի օրէնքների 34 և 41-րդ յօդուածների հիման վրա, խնդրում է ստորև յիշված հիմարկութիւնների տէրերին շնորհ բերել Ուպրավա, ընտրելու մէկ անդամ տուրք բաշխող յանձնաժողովի և բաշխել տրակտիրային տուրքը յօդուա քաղաքի, 1906 թ-ի համար, հետևեալ օրերը ցերեկվայ ժամը 12-ին —տրակտիրնե բրև գինեատների տէրերը նոյեմբերի 8-ին, հիւրանոցներինը—նոյեմբերի 9-ին, բեսատորաններինը, բուֆէտներինը և կօնդիտէրները— նոյեմբերի 10-ին, գարեջրատներինը—նոյեմբերի 11-ին, գինու խանութների և պահեստների տէրերը—նոյեմբերի 12-ին, կահաւորված և խոհանոց ունեցող սենեակներինը, սրճարանների և թէյարանների տէրերը—նոյեմբերի 13-ին, ուտելեղէնի խանութներինը —նոյեմբերի 14-ին և քարվանսարաներինը—նոյեմբերի 15-ին։

**ԲԺ. Ն. ԵԱՐԱՄԻՇԵԱՆ**
Ներքին, մանուկների, կաշուի և վեներական հիւանդութիւնների համար։
Ընդունում է ամեն օր առաւօտեան 9—12 ժ.
երեկոյեան 5— 7 ժ.
Հասցէ—Աբասաբադեան հրապարակ № 9, մուտքը Շելկօվնիկեան փողոցից № 1։
(Եր.հ.կ.) 2—20

Մի ինտելիգենտ հայ ընտանիքում տրվում են
**ԵՐԿՈՒ ՍԵՆԵԱԿ**
առանձին մուտքով մի կամ երկու հոգու։
Նոյն տեղ ընդունվում է և մի աշակերտ ամբողջ պանսիօնով։ Դիմել уголъ Жуковскаго „Гудовича д. № 15 (со стороны Жуковскаго.)
2—3

13-й годъ изданія свободолюбивой ежедневной
**ВСЕОБЩЕЙ МАЛЕНЬКОЙ ГАЗЕТЫ**
2 р. за годъ С.-ПЕТЕРБУРГЪ Невскій пр. 139
Выходитъ безъ цензуры. Собственная типографія
Содержаніе: депеши и всѣ новости о политикѣ, общественной жизни, о Госуд. Думѣ, о народн. представительствѣ, о законахъ, о партіяхъ и союзахъ, о рабочихъ, о безпорядкахъ, о наукахъ, медицинѣ и техникѣ. о музыкѣ, театрахъ, и искусствахъ, романы, стихи, картины и портреты.
Подписная цѣна съ дост. и пересылкой за годъ 2 р. за полгода 1 р. за 3 мѣс. 50 к.
Марками на 20 к. дороже. Редакторъ-Издатель А. Н. Молчановъ.

Գրիգորեան
Գրիգորեան
Գրիգորեան
Գրիգորեան
1860. Մոսկվա 1870. Ս.-Պետերբ. 1882. Մոսկվա 1896. Նիժնի-Նովգ.
եւ ոսկի medaliներ գործուածքների համար
ՖԱՐԳԱՐԱՑՆ պարգեւի
(GRAND-PRIX)
ՊԱՐԻԶԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՈՒՄ
արդիական գրասենեակ
ՄԻՄԱՐՔՅԱՆ
ՌԻԳԻՖԷՔՏՆԵՐԻ
ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱՆ
Գերազանցիկ դիմադրող ոտնամաներ
Ամբողջ գործարանի համար
Գլխաւոր գրասենեակ՝ Պետերբուրգում որ հիմնված է 1860 թվին։
Ամբողջ գործարանի համար դիմել հետևեալ հասցէով։
Մոսկվայի գրասենեակ՝ Գրիգորեան
Գրիգորեան
Գրիգորեան
Գրիգորեան